



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5.4-3  
Q 82

3332

491.99-8  
Q-82

1904

Y-4. w 35

2010

ՅՈՎՀ. ԱՐԵԲԵՑՅԱՆ

431.99-8  
4-82 153  
ՀԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

աստվերներով եւ քերականական վարժութիւններով գրաւոր  
աշխատութիւնների համար)

ՀՅՈՒՅՆ  
ՀՅՈՒՅՆ

Допущена Попечительскимъ Советомъ Кавказскаго Учеб-  
наго Округа къ употребленію въ училищахъ.

Մասնակիութեան համար

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Գ Ր Ա Գ Ո Ւ  
Տպարան Յակովը Յ. Պատավեանի

1904

2002

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՐԻ

## 1. ԾՈՅԼ ԱՃԱԿԵՐՑԸ



«Այսօր չեմ ուզում զասի զնալ. լաւ է զնամ խաղալու. — վճռեց մի փոքրիկ մանուկ և վագեց դէպի զաշտակ»

Բայց շուտով նա մենակ ձանձրացաւ:  
2որս կողմը նայեց և տեսաւ, որ մեղոնի  
թռչկոտում է ծաղկից ծաղիկ:

—Մեղնու, մեղու, —կանչեց մանուկը. —արի, մի քիչ խաղանք:

— 2է, — պատասխանեց մեղուն. — ևս քիզ նման ծոյլ չեմ, որ  
կործ թռղած, խաղն սկսեմ. խաղան մենակ:

Գրանից յետոյ մանուկը տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կտուցով  
խոտ էր կրում իւր բունք:

—Միքնան թռչնակ, —ասաց նրան երեխան. — մի քիչ շխաղանք:

— ի՞նչ ես ասում, ծոյլ տղայ, — բարկացաւ թռչնակը. — ես ժամանակ ունիմ խաղալու. ես զեռ պէտք է մժեղներ որսամ՝ ձագերիս կերակրեմ, բուրդ, փետուր հաւաքեմ՝ բունս փափկացնեմ:

Մանուկը մտածմունքի մէջ ընկաւ. Մտածեց, մտածեց և վա-  
ղեց դպրոց:

Ի՞նչ մտածեց մանուկո:

83-54

## 2. Տիսնիր երեխնԱՅ

Երբ որ ծաղեցաւ պայծառ արեզակ,  
Երլար, աղամի, հաւ ու ծիծեսնակ,  
Զի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով  
Գնացին իրանց գործին շտապով:

Միայն ծոյլ տղան չփնաց դպրոց,  
Գիրը շպրտեց ու փախաւ փողոց.  
Իրիկուն ամենը յետ գարձան ուրախ,  
Միայն տղան էր տրտում, զլխակախ:



## 3. ՃԱՆԱՍԽԲ ՄԱՆՈՒԿԲ

Ա.

Ճանասէր մանուկը լուսամուտի առաջ նստած իւր գասերն է՝  
սովորում, իսկ փայլուն արել նրան զուրս էր հրաւիրում, ասելով

— Միրն երեխայ, բաւական չէ կարզաս, զուրս արի, ո՞ւ  
քիչ էլ խաղա:

— Ոչ, պայծառ արի, ես զեռ չեմ կարող խաղալ, պէտք  
զասերս պատրաստեմ:

Բ.

Մանուկը կարզում ու զրում էր, յանկարծ մի փոքրիկ թրու  
նակ թթվալով եկաւ, լուսամուտի առաջ նստեց և ծրվըլալ  
տապաց.

— Միրն երեխայ, հերիք է, որքան զրեցիր, զուրս արի,  
խաղա:

— Ոչ, սիրն ինչնակ, — պատասխանեց մանուկը. — Ես զեռ  
չեմ կարող խաղալ. պէտք է զասերս լաւ պատրաստեմ:

Գ.

Մանուկը շարունակում էր զրել ու կարզալ, իսկ պարտիզի  
միջից կարմիր կեռասը կարծես ատում էր նրան.

— Միրն մանկիկ, բաւական չէ աշխատես. զուրս արի,  
հասած պտուղներս կեր, կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. «Ի՞նչ ախորժակով կեռաս ուտեմ,  
քանի որ զասերս զեռ չեմ սովորել»:

Դ.

Մանուկը զործը վերջացրեց, զրելը հաւաքեց, ուրախ-ուրախ  
զուրս փաղեց և համարձակ կանչեց.

— Այն ով էր ինձ հրաւիրում, եկէր, ես պատրաստ եմ:

Ելժմ արել նրա համար աւելի պայծառ էր փայլում, թրուչ-  
նակն աւելի քաղցր էր երգում, իսկ կեռասը նրան անշափ համեղ  
էր թւում:

Ինչո՞ւ:

## 4. Հ Ր Ա Խ Է Ր

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,  
Երեն էլ փաղուց ելաւ, բարձրացաւ.  
Խելօր մանուկներ, շուտ հաղնուեցէր,  
Ջուտով զասատոն զոր հաւաքուեցէր:

Մարդ և անասուն, դագան և թռչուն,  
Ամենը էլ իրանց գործին են զնում.  
Մրջինը բերնով կերակուր տանում,  
Մեղոն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Դաշտը գոյնզգոյն ծաղկով դարպարուած,  
Մարգագետինը կանաչ հաղնուած,  
Անտառը ձմեռուայ քնից արթնացած,  
Եւր տերենները շարժում է կամաց:

Հինորմներն իրանց ուռկանն են քաշում,  
Հնձողներն իրանց մանզաղը շարժում.  
Դուր էլ, մանուկներ, ձեր զրբերն առէք.  
Աստուած ծուլութիւն չի սիրում երբէք:

#### Գ Ի Ս Ի Ո Բ Վ Ե Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Բ

1. Քրեցէք այն բոլոր առարկաների անունները, որոնք գուք տեսնում էք գասատան մէջ: Եւրաքանչիւր բառից յետոյ վերջակէտ դրէք: Մկիզքը և վերջակէտից յետոյ գլխատառ զըցէք:

Օրինակ: — Սեղան: Աթոռ: Գիրք...

2. Արտազրեցէք «Ճ խ ու ր ե ր ե խ ա յ» ոտանաւորից բոլոր շնչառոր առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ: Աքլար: Աղանի: Հաւ...

3. Արտազրեցէք «Ճ ա ն ա ս է ը մ ա ն ո ւ կ ը» յօգուածից բոլոր անշունչ առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ: — Լուսամհուտ: Դաս: Արեւ...

4. Քրեցէք առանձին-առանձին շնչառոր եւ անշունչ առարկաների անունները:

Ժոշում: Բու: Բալ: Թաշկինակ: Քար: Կատու: Չի: Բաղ: Թել: Կով: Գիտ: Գայլ: Ծանծ: Թուղթ: Կոռոնկ: Հաւ: Սեղան: Շոն: Գիրք: Բանալի: Պատուհան: Սենեակ: Գետ: Աշակերտ: Աթոռ: Կարստ: Մատ: Գլուխ: Գիլացի: Քաղաքացի:

#### 5. ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ

Մի մարդ երկու որդի ունէք — մեծը տասներկու տարեկան էք, խոկ փոքրը՝ տասը: Մի անդամ հարեամներն ասացին, թէ նրա որդիքը ծիծաղել են մի պատու կնոջ վրայ: Հայրը խիստ յանդիմանեց նրանց և երեխաները խոստացան ուղղուել: Բայց մի-

րանի ժամանակից յետոյ մանուկները մոռացան իրանց խոստումը և, մի ծերունու պատահելով, սկսեցին ծաղրել նրան: Այս բանն էլ հօր ականջին հասաւ:

Միւս օրը հօր տօնն էք: Որդիքը եկան շնորհաւորելու և առողջութիւն ու երկար կեանք մաղթեցին նրան:

— Զաւակներս, — ասաց հայրը, — ես չեմ ցանկանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ ծերանամ, չար մանուկները ծիծաղեն ինձ վրայ:

Երեխաները հասկացան, թէ ինչ է ուզում ասել հայրը և սասափիկ ամօթից չգիտելին, ինչ անեն: Այս օրից նրանք այլևս չեն ծիծաղում ծերունիների վրայ:

#### 6. Գ Ի Ի Ղ Ի Գ Ր Ա Գ Է Տ Ը Ը

Եւր որդուց մայրը  
Նամակ ստացաւ,  
Կարօտած սիրալ  
Վեր ու վար եղաւ:

Որդին հեռու էք,  
Օտար բաղարում,  
Ծառայում մի տան,  
Դպրոցում սովորում:

Նայում է թղթին,  
Սիրուն նշաններ,  
Բայց այդ զրերի  
Միտքը չգիտէք:

Տղան ինչ է զրել,  
Պէտք է իմանար,  
Բայց նրա տանն էլ  
Կարդացող չկար:

Գուրս եկաւ փողոց,  
Մի բարի նստեց,  
Գիւղի տէրտէրի  
Որդուն հանդիպեց:

Եւ նրան կանչեց,  
— Տէրտէրի տղայ,  
«Մօտս եկ, ապրեն,  
«Ես թուղթը կարդա:

#### 7. Ե Ղ Բ Ա Յ Ր Ն Ե Ր Ը

Դիւղացին եօթը որդի ունէք: Հայրը միշտ պատուիրում էք նրանց, որ հաշտ ապրեն միմեանց հետ, բայց եղբայրները չեն կատարում հօր պատուերը և իրանց օրը կուտով էին անցկացնում:

Մի անդամ էլ հայրը հրամայեց մի ցախաւել բերել և ասաց որդոցը:

— Զեղանից ով ոք կոտորէ այս ցախաւելը, հարիւր մանել կոստանայ ինձանից:

Եղայրները շատ չարչարուեցին, բայց չկարողացան կոտորել:

Այն ժամանակ հայրը քանզից ցախաւելի կապերը և բոլոր ճիպունները ջոկ-ջոկ կոստանեց:

— Տեսէր, — ասաց նա որդոցը. — Թող այս ցախաւելը ձեզ օրինակ լինի. Եթէ դուք հաշտ ապրէք, ձեզ ոչ ոք չի կարողանայ յաղթել, իսկ եթէ իրար հետ կոտըք և միմնանց հակառակ լինիք, ձեզ ամեն մարդ էլ հեշտութեամբ ջոկ-ջոկ կըոչնչացնէ:

## 8. ՈՐԵՒ ՊԱՀԱՆՁԸ

Որք եմ ամսառն, անպաշտան,  
Տուէր, խնդրեմ, ապաստան,  
Տուէր մնունդ և ուսում,  
Ես մարդ դառնալ եմ ուզում:

Տուէր ձեզ մօտ որդեգիր,  
Տուէր ձեռքս արհեստ, գիր,  
Լինիմ խելօք ու ազնիւ,  
Վայելիմ միշտ սէր, պատիւ:

## ԴՐԵՒԹՅ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

### 5. Արտագրեցէք հետեւալ բառերը եղակի և յոգնակի թուով:

Հաւ—հաւը: Օր—օրեր: Գործ—գործ...: Դաշտ—դաշտ...:  
Քար—քար...: Գոյն—գոյն...: Քոյր—քոյր...: Սար—սար...: Բառ—  
բառ...: Խոտ—խոտ...: Ցանց—ցանց...: Խաչ—խաչ...: Դիու—  
զիու...: Ամպ—ամպ...: Գունդ—գոնդեր: Թուղթ—...: Տուն—...:  
Գիրք—...: Միթք—...: Մանուկ—մանուկներ: Թոշուն—թոշուն...:  
Բերան—բերան...: Մեղու—մեղու...: Ժաղիկ—ժաղիկ...:

6. Արտագրեցէք «Հայրը և որդիքը» յօդուածից բոլոր գոյական անուններն իրանց սկզբանական ձևով:

Օրինակ.— Հայր: Որդի: Մարդ:

7. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և փակադերի մէջ հարցեր աւելացրէք: Հարցերի տակ դիմ քանիցէք:

Կովը (ո՞վ) բառաշում՝ է: Արեւը (ի՞նչը) ծագեց: Աշակերտը (...): Խալում՝ է: Անձրեւ (...): է զայիս: Սազը (...): լողում՝ է: Արծիւզ (...): Թուշուն՝ է: Սոխակը (...): Երզում՝ է: Օճը (...): Աղջունը՝ է: Ժամը (...): Ժաղկեց:

## 9. Վ Ա Տ Ա Կ Ե Ր

Հայրը տեսաւ, որ իւր որդին վատ ընկերների հետ է ման զալիս:

— Զաւակս, — ասաց նրան. — Հեռու կաց զրանցից. զրանք բեկ կրփչացնեն:

— Ոչ, հայրիկ, — պատասխանեց մանուկը. — Ճիշտ է, իմ ընկերները վատ են, բայց ես կաշխատեմ նրանց ուղղել:

Հայրը վեր առաւ մի կողով, որտեղ միրանի փշացած խըն-ձորներ կային և նրանց մէջ մի զեղեցիկ կարմիր խնձոր և մի մարտր քար զնելով, ասաց որդուն:

— Թոնդ սրանք մասն այստեղ, տեսնենք՝ ինչ կըլինի:

Երեք օրից յետոյ հայրը որդուն բերեց կողովի մօտ: Նայեցին և ինչ տեսան: Գեղեցիկ, կարմիր խնձորն էլ արդէն սկսել էր նեխուել, փշանալ, իսկ քարն, իհարկէ, ամեննեին չէր փոխուել:

— Տեսնում ես, — ասաց հայրը որդուն. — Եթէ դու էլ այս քարի նման պինդ ես, ես քեզ չեմ արդելի վատ մարդկանց հետ ընկնել. իսկ եթէ թոյլ ես, ինչպէս այս խնձորը, այն ժամանակ ինք էլ կրփչանաս վատ ընկերների մէջ:

28.08.2022  
X

10. Գ Ի Բ

Կարդա, այ իմ խելօք մանուկ,  
Կարդա, զրիք զու ամին օր.  
Գիր կարդողի խելքն է կտրուկ,  
Միտքը—պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով դու աշխարհիս  
Կըճանաչես շարն ու բարին.  
Ով է խնդում, ով է լալիս,  
Ով է զրկում խեղճ թշուառին:

11. Ա Ր Գ Ի Ա Կ Ա Ն Ս Է Բ

Մի երեխայ, փողոցի միջով վազելիս, ընկաւ կտորի տակ.  
անիւն անցաւ նրա ոտի վրայով և չարդեց, Խեղճ երեխային  
վերցրին և, տուն տարան: Նրա մայրը տանը հիւանդ պարկած  
էր և հէնց որ լսեց որդու լացուկոծը, վախից ուշաթափուեց:

Երեխան խսկոյն կտրեց ձայնը և մինչդեռ ուղղում ու կա-  
պում էին ոտը, նա ամեննեին ձայն չհանեց:

—Միթէ դու ցաւ չես զգում, —հարցրեց նրան վնրջապէս  
բժիշկը:

—Օ՛օ, սաստիկ, —հառաշեց մանուկը, —բայց նո չեմ ուզում,  
որ մայրիկս իմանայ այդ. նա շատ կրվշտանայ:



12. Օ Ր Օ Ր Ո Ց Ի Ե Բ Գ

Երի, իմ սոխակ, թնդ պարտէզ, մէրին,  
Տաղերով քուն բեր տղիս աշերին.  
Բայց նա լալիս է, զու, սոխակ, մի զալ.  
Իմ որդին չուզէ տիրացու զառնալ:  
Եկ, աբեղածաղ, թող արտ ու արօտ,  
Օրօքէ տղիս, ընի է կարօտ.

Բայց նա լալիս է, զու, ձագուկ, մի զալ.  
Իմ որդին չուզէ արեղայ զառնալ:

Թոնդ դու, տատրակիկ, բո ձագն ու բունը,  
Վուվուզով տղիս բեր անուշ բունը.  
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի զալ.  
Իմ որդին չուզէ սպաւոր զառնալ:

Կաշաղակ ճարպիկ, զող, արծաթասէր,  
Ճահի զրուցով որդուս քունը բեր.  
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի զալ.  
Իմ որդին չուզէ սովորապար զառնալ:

Թոնդ որադ, արի, բաջառիրտ բաղէ,  
Քո երզը զուցէ իմ որդին կուզէ:  
Բազէն որ եկաւ, որդիս լոեցաւ,  
Մազմի երզերի ձայնով բնեցաւ:



Գ Ր Ե Կ Ո Բ Վ Ե Ր Ժ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Բ

8. Արտազրեցէք «Պ, ա տ ը ն կ ե ս» յօդաւածից թէ շնչաւոր և թէ ան-  
շունչ առարկաների անունները եղակի և յոպնակի թուով:

Օրինակ: —Եղակի թ. —Ընկեր: Հայր: Որդի:

Յոզնակի թ. —Ընկերներ: Հայրեր: Որդիներ:

9. Գրեցէք ձեղանից միքանի փոքրիկ նախադասութիւններ եղակի թուով:  
Կրաքանչիւր նախադասութիւնից յետոյ վերջակէտ գրէք: Վերջակէտից յետոյ  
դիմատառ գրեցէք:


Օրինակ: —Ընկերս եկաւ: Ժիտը ծըլվըլում է:

10. Արտադրեցէք միւնոյնը յոզնակի թուով:

Օքինակ: — Հնկերներս եկան:

11. Արտագրեցէք և հարցերին յարմար բառեր տւելացրէք:

Մանուկը (ո՞վ) պատասխանեց: Աստղը (ի՞նչը) փայլում է: ..... (ո՞վ) եկաւ: ..... (ի՞նչը) ընկաւ: ..... (ո՞վ) սովորեցնում է: ..... (ո՞վ) երգում է: ..... (ի՞նչը) պայծառ է: ..... (ո՞վ) վերադարձաւ: ..... (ո՞վ) կծում է: ..... (ի՞նչը) մաքուր է:

}  13. Հ Բ Ա Ճ Ա Լ Ի Խ Ո Տ

Երկու աղախին, Աննան ու Կատարինէն, բաղար էին գնում: Նրանցից ամեն մէկը մի կողով խնձոր էր տանում: Աննան շարունակ արտնջում էր ու հաւաչում, իսկ Կատարինէն ծիծաղում ու կատակներ էր անում:

— Ասա, ինչք է պատճառը, որ դու այդպէս ուրախ ուրախ ծիծաղում ես. — Հարցը վերջապէս Աննան. — չ որ բո կողովն էլ իմիս պէս ծանր է և դու էլ ինձանից ուժեղ չես:

— Ճշմարիտ ես տում, — պատասխանեց Կատարինէն. — բայց ես իմ կողովում մի այնպիսի խոտ եմ զրել, որից ամեն բեռ թիթեանում է:

— Միթէ, այդ ինչպիսի խոտ է և թրտեղից ես ճարել, — Հարցը Աննան պարմացած:

— Թէ որտեղից եմ ճարել, այդ ես էլ չպիտեմ, — պատասխանեց Կատարինէն. — միայն անունը կարող եմ ասել, դա կոշտում է համբերութիւն, որից դու զուրկ ես, սիրելի Աննա:

Համբերութիւնը կեանք է:



#### 14. ՊԱՊՐ ԵՒ ԹՈՌՆԻԿԸ

Ա.

Պապը սաստիկ ծերացել էր: Նրա աշքերը լաւ չեն տեսնում, ականջները ծանրացել էին. Նրա ձեռներն ու ոսները ծի-

ըութիւնից զողովում էին, այնպէս որ՝ զղալը բերանը տանելիս՝ կերակուրը կաթկըթեցնում էր:

Այս բանը դիւր չէր գալիս նրա որդուն ու հարսին: Նրանք ծերին իրանց հետ հացի չէին նստացնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ուտելու:

Մի անգամ, ճաշի ժամանակ, ծերի ձեռները զողովացին, կաւէ ամանը վայր ընկաւ և կոտրուեցաւ. Աւելի ևս բարկացան հարսնացրին խեղճ ծերի վրայ և զրանից յետոյ փայտէ ամանով էին կերակուր տալիս նրան:

Բ.


Ծերունին մի լժոռնիկ ունէր: Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից ինչոք բան էր շինում:

— Եյդ ինչ ես շինում, որդի, — Հարցը նրան մայրը:

— Փայտէ աման եմ շինում, մայրիկ, որ երբ դու և հայրիկս ծերանար, նրանով կերակուր տամ ձեղ, — պատասխանեց մանուկը:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամօթից կարմրեցան: Նրանք այնուհետեւ սկսեցին ծերին շատ պատուվ պահել:

Պատուիք ծերին, որ ծերանաս: ծերանաս, ծերի պատիւը կիմանաս:



#### 15. ՄԵԾԵՐ ԵՒ ՓՈՔՐԵՐ

Գարեգինը, պատուհանի առաջ կանդնած, նայում էր զէպի փողոց, որտեղ պառկած էր նրանց զամբոր—Բօղարը և տարածում էր արեգակի տակ:

Յանկարծ Բօղարին մօտեցաւ մի փորսիկ բովոյթ և սկսեց սաստիկ անհանգստնել նրան — յարձակում էր վրան, հաշում էր և կրծոտում նրա ահագին թաթերն ու զունչը:

— Սպասիք, — ասաց Գարեգինը. — նա քեզ խրատ կըտայ:

Քոթոթը շարունակում էր իւր շարութիւնները, իսկ Բօղարն ամեննեին չէր բարկանում նրա վրայ և տեղից չէր շարժուում:

— Տեսնում ես,— ասաց հայրը Գարեգինին.— Բօղաըը քեզանից բարեսիրա է. նա իրանից փոքրին չի դիպշում: իսկ երբ ըստ փոքր եղբայրներն սկսեն քեզ հետ խաղալ, այն ժամանակ անշուշտ ձեր խաղը կրվերջանայ նրանով, որ դու նրանցից մէկին կամ միւսին մի դրկանը կրհացնես:



## 16. ԸԹԻՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ա.

Ժամանակով կատուն ճօն<sup>1</sup> էր,  
Ճոնն էլ զլիսին զգակ շոնէր.  
Միայն, դիտեմ ոչ՝ որտիանց-որտի<sup>2</sup>  
ձանկել էր մի զառան մորթի:  
Եկաւ մի օր, ձմբոնամտին,  
Կատուի կուշտը տարաւ մորթին.  
— Բար' յաջողում, ուստա՞ Փիսօ,  
«Գլուխս մրսեց, ի սէր Ասոյ,  
«Առ էս մորթին ու ինձ համար  
«Մի զգակ կարի զլիսիս յարմար:  
«Վարձգ կըտամ, միամիտ մնա,  
«Միայն խնդրում եմ, շատ շուշանայ:  
— Աշրիս վրայ, քեսի Քուշի,  
«Մի զգակ ա, խու մի բուքը չի.

<sup>1</sup> Ճօն—դերձակ, <sup>2</sup> Որտիանց-որտի—որտեղից-որտեղ

«Քու թանկագին խաթեր համար  
«Ուրբաթ օրը համեցէք տար.  
«Փողի մասի աւելորդ ա.  
«Մեր մէջ խօսալի էլ ամօթ ա.  
ինչ վենձ<sup>1</sup> բան ա, տօ՛ հէր օխնած,  
«Հա, հա, հա... մի զգակի վարձ...»

Բ.

Ուրբաթ ծէզին քեսի Քուշին  
Ուստից ծէրբին<sup>2</sup>, բաց բաց կուճին<sup>3</sup>  
Թափի թափ տալով, ծանդըր ու մեծ  
Ուստա կատուի շէմքում կանգնեց.  
— Ուստին ուր ա... վափախս ուր ա...  
— Մի քիչ կացի, հրէս կերեայ:  
Ուստին եկաւ բուքը հազին.  
Զանը տեսաւ, բեխի տտկին  
Իրան-իրան քիչ վնթվինթաց  
Ու մուշտարու վրայ թնդաց.  
— Ցրտատար էլար... վահ, տնաշէն,  
«Հես թողնում, որ մի շոնչ բաշեն.  
«Մաթ<sup>4</sup> խու չի, զիս հլանոր եմ  
«Ցրցամ տուել<sup>5</sup>, թէ որ կարեմ»:  
— Գէ հէր օխնած, էտենց<sup>6</sup> ասա,  
«Էդ բարկանալդ էլ լնչիս ա.  
«Փող եմ տուել, շուտով կարի,  
«Թէ չէ ասա, էկուց արի...»  
Ասաւ Քուշին ու նեղացած  
Կերազարձաւ գլուխը բաց:

Չ.

Մին էլ եկաւ, դարձեալ շկար.  
Էս անգամը դիպան իրար.  
էլ անպատիւ, պէտոռ<sup>7</sup> խօսրեր,

<sup>1</sup> Վենձ—մեծ: <sup>2</sup> Եկըքին—վաղ, կանուխ: <sup>3</sup> Կուճին—գլուխը: <sup>4</sup> Մաթ—ժամացոյց: <sup>5</sup> Ցրցամ տալ—ջուր սրսկել: <sup>6</sup> Էտենց—ալդպէս: <sup>7</sup> Պետոռ—անպատիւ:

Ել հին ու նոր, Ել հէրն ու մէր,  
Ել զող Փիսօ, Ել քաշալ շուն...  
Բանը հասաւ դիւանքաշուն<sup>1:</sup>  
Մինչև շունը զնաց - եկաւ,  
Ռւստա կատուն կոտըրն ընկաւ<sup>2:</sup>,  
Գլուխն առաւ ու մի զիշեր  
Հայտէ, կորաւ. Էն զնալն էր.

Դ.

Էն օրուանից մինչև օրս Ել  
Ջունն էս բանը չի մոռացել,  
Մտքումը հա զեռ պահում ա,  
Որտեղ կատուին պատահում ա,  
Վրայ ա վագում, մորթուց քաշում,  
Իրան մորթին ետ ա ուզում.  
Խսկ սեհրես կատուն յանկարծ  
Ետ ա զանում ու բարկացած  
Փշտացնում ա, մթամ<sup>3:</sup> նոր ես  
Ցրցամ տուել, թէ որ կարեմ:



### 17. ԾԻԾԵԹՆԱԿՆԵՐՆ ԵՒ ՃՆՃՂՈՒԿԲ

Մի անգամ ճնճղուկը կամեցաւ զօռով  
տիրել ծիծենակի բնին և այստեղ բնակուելէ  
Բնից արտարտուած ծիծենակն աղաղակ  
բարձրացրեց, որի վրայ իսկոյն հաւաքուեցան  
նրա ընկերները և սկսեցին յետ ու առաջ  
անել բնի մօտ. նրանք մտիկ էին տալիս  
ներա, աղաղակում էին, կարծես այդպիսով  
կամենում էին թշնամուն դուրս անել բնից:  
Բայց կամակոր ճնճղուկը ներա էր բաշուել  
բնի խորը և դուրս գալու միտք չունէր:

<sup>1:</sup> Գիւանքաշի - դատաւոր; <sup>2:</sup> Կոտըրն ընկաւ - սնանկացաւ; <sup>3:</sup> Մթամ - իրը թէ:

Վերջապէս, տեսնելով որ ոչինչ չի օգնում, ծիծենակները բոլորը միասին յանկարծ անհետացան: Նրանք թուան-գնացին մօտիկ ճահիճը, կտուցներով մի-մի փոքրիկ կտոր ցեխ առան և եկան, միքանի բոպէի մէջ ծածկեցին բնի մուտքը: Այսպէս մեր յանդուզն ճնճղուկը բնի մէջ փակուած մնաց և սովամահ եղաւ:

### ԳՐԸ Ը Ո Բ Վ Ա Բ Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

12. Արտագրեցէք հետեւալ գոյական անունները եղակի թառով:

Տներ: Աչքեր: Քաղաքներ: Մարդիկ: Դէզեր: Երեկոներ: Մազեր: Օղակներ: Մայրեր: Տեղեր: Աթոռներ: Եզներ: Արիծներ: Բզէզներ: Շղթաներ: Պողեր: Լորեր: Կանայք: Զուաններ:

Օրինակ - Տներ - տուն: Աչքեր - Աչք:

13. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և ենթակաների տակ գիծ քաշեցէք:

Քոթոթը խաղում է: Եղբայրս տարանում է: Կատուն շանկուց: Պապը ծերացել էր: Որդին բարկացաւ: Չուկը լողում է: Աղախինը հառաշում է: Հիանդն առողջացաւ: Ամանը կտրուեցաւ:

14. Արտագրեցէք նոյնը յոդնակի թուով:

Օրինակ - Քոթոթները խաղում են...

### 18. ԾԻԾԵԹՆԱԿԻ ՅԻԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ծիծենակը բուն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Եմեն մի շիզ կացնելիս՝  
Սոաջուան բունն էր յիշում:


Մէկ անգամ էր նա բուն շինել  
Եւ շատ անգամ կարկատել,  
Բայց այս անգամ, վերաղարձին,  
Բունն աւերակ էր գտել:

Այժմ նորից բուն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջուան բունն էր յիշում:  
Նա յիշում էր անցած տարին  
Իւր սնուցած ձագերին,  
Որոնց ճամպին յափշտակեց  
Արինարբու թշնամին:

Բայց նա կրկին բուն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջուան բունն էր յիշում:

### 7 19 Առիհօթը եի ՄՈՒԿԸ

Առիւծը քնած էր: Մի մուկ վազեց, անցաւ նրա վրայով:  
Առիւծը զարթնեց և բանեց նրան: Մուկն սկսեց խնդրել, որ  
արձակէ իրան:




—Թող ինձ, — ասաց նա. — զբա փոխարէն ես բիզ լաւու-  
թիւն կանեմ:

Առիւծը ծիծաղեց այդ խօսքերի վրայ, բայց էլի արձակեց  
մկանը:

Միքանի ժամանակից յետոյ առիւծը որսորդների ցանցի մէջ  
ընկաւ: Նա զարհուրելի կերպով մոնչում էր և բաշրջում ցանցի  
թոկերը, բայց աւելի էր խճրճում նրա մէջ: Մուկը լսեց առիւ-  
ծի մոնչոցը. Նա հաւաքեց իւր ընկերներին, որոնք եկան, իրանց  
սուր ատամներով կըծեցին, կտրատեցին ցանցի թոկերը և  
առիւծին ազատեցին թակարդից:

— Յիշում ես, — ասաց այն ժամանակ մուկն առիւծին, — որ  
դիծաղում էիր ինձ վրայ և չէիր կարծում, թէ ես քեզ լա-  
ւութիւն կարող եմ անել: Այժմ տեսնում ես, որ մկնից էլ կտ-  
րելի է լաւութիւն սպասել: X

1906 | 29265



### 20. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

— Ծնկել եմ ճանկդ, զէ՞ն, ուտում ես, կեր,  
«Ել ինչ ես խառնում իմ զառը ցաւեր.  
Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է,  
«Խեղճ ձագս բնում անտէր մնացել է»:

Սսաց մի խեղճ մուկ անիրաւ կատուին,  
Որ ճանկել նրան, զըել էր տակին: //

— Միթէ ուտելն է մենակ իմ ուզած, —

Պատասխան տուեց կատուն բարկացած:

— Ամեն մի ձայնդ, բաղցը ծըվծըվոցդ

«Որ ականջս է ընկնում, ու այդ թուլանալդ

«Տեսնելիս՝ սիրտս այնպէս է ցնծում,

«Որ կարծում եմ, թէ նոր կեանք եմ ստանում»:

Գ Բ Ե Ւ Ա Ր Վ Ե Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

15. Արտագրեցէք հետեւալ գոյական անունները:

Աստուած: Յիսուս: Աննա: Վարդան: Վահան: Տփխիս: Արարատ: Արագած: Արար: Շիրակ: Երեւան: Էջմիածին: Ծովառատ: Հայաստան: Ֆրանսիա:

16. Արտագրեցէք «Առիւծը և մուկը» յօդուածից բոլոր հառարակ գոյական անունները:

Օքինակ: — Առիւծ: Մուկն:

17. Արտագրեցէք և հնթականներ աւելացրէք:

Զին (ո՞վ) խրխնջում է: .... (ո՞վ) թռչուն է: .... (ո՞վ) զրում է: .... (ի՞նչը) ղառն է: .... (ի՞նչը) կաթկաթում է: .... (ո՞վ) հազնուեց: .... (ո՞վ) վարում է: .... (ո՞վ) նստած է: .... (ո՞վ) թռչում է: .... (ի՞նչը) քանդուեց:

18. Գրեցէք ձեզանից միքանից յատուկ գոյական անունները:

## 21. ՈՐՍՈՐԴԻՆ ՈՒ ԿԱՔԸՆԻԾ



Մի անգամ կարաւը, անտառից դէպի դաշտ թռչելիս՝ պատահեց որսորդին:

— Միքելի որսորդ, — ասաց նա, — Աստուած սիրես, ձագերիս չսպանես. Նրանք այս անտառի բոլոր թռչուններից ամենասիրուններն են:

— Ջատ բարի, կարաւիկ, — պատասխանեց որսորդը. — Եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կրխնայիմ, ձեռք չիմ տալ:

Կարաւը հանդիսա սրտով թռաւ-զնաց իւր գործին: Բայց երեկոյեան տուն վիրագառնալիս ինչ տեսնի խեղճ մայրը: Որ-

սորդը մաղախի մէջ զրած՝ տանում է փոքրիկ կարաւներին, նրա սիրատուն ձագուկներին:

— Այս, ամիսիզ որսորդ, — մորմոքած սրտով ասաց մայրը. չէ որ դու խոստացար ինայել ձագուկներիս. ինչու խօսրդ շպահցիր, ինչու սպաննցիր խեղճ ձագուկներիս: Ամօթ քեզ, ստախոն մարդ:

— Բայց չէ որ դու ինձ ասացիր, թէ քո ձագերն այս անտառի ամենասիրուն թռչուններն են, այնինչ իմ սպանածները, ինչպէս դու էլ տեսնում ես, ահա այս մոխրագոյն թռչնակներն են, — պատասխանեց որսորդը:

— Այս, բացազնեց որդեկորոյս մայրը. — միթէ դու չը զիտես, որ ամեն մի մօր համար ամենասիրունն ու ամենազորեկանը իւր հարազատ զաւակն է:

## 22. ԹՈՒԻԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ



Մի թութակ տան մէջ այնքան ճրղզաց, շրվագաց, որ տան տէրը նրան տանից դուրս անել տուեց:

Թութակի ինքնասիրութեանը զիպաւ այս բանը և նա սկսեց զանգատուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու:

— Աչքիս լոյս, — ասաց թութակը սոխակին. — Ես լսել եմ, որ դու լու վարպետ ես երածշտութեան մէջ, ինպես լսես իմ երգերը և ասես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը զիւր չեն դալիս:

— Ջատ լու, — ասաց սոխակը. — Երգիր, տեսնեմ ինչպէս ես երգում, ես որախութեամբ կըլսեմ թեզ պէս սիրուն թռչունի երգը:

Թութակի սկսեց իւր բոլոր ճարտարութիւնը թափել, հաւի պէս կըշկրչաց, շան պէս հաշեց, կատուի պէս մլաւեց, մի խօսրով կըկնեց իւր բերան-արած բոլոր բառերն ու երգերը:

—Եցմ, սիրելիս, —ասաց նա սոխակին. —ինդքեմ ասես,  
դու լսած կատ մի այսպիսի բան երբեցէ:

—Սիրուն թութակ, —պատախանեց սոխակը. —դու ինձ  
կըներես, եթէ քեզ մի նկատողութիւն անեմ: Դու երգում ես  
ուրիշների ձայնով, ուրիշների երգեր ես երգում: Եթէ ունենաս  
բո սեպհական երգը, էլ քեզ ատանից դուրս չեն անիլ:



### 23. ԳԵՐԻ ԹՌԻԹԱԿ


Իմ տիկինը կերակրում է  
Ինձ նշերով, շաքարով,  
Իմ վանդակը զարդարում է  
Իւր քնրշիկ ձեռքերով:

Բայց զէթ մի ժամ ուրախ լինել  
Ես չեմ կարող իմ կեանքում,  
Երբ յիշում եմ, թէ զերի եմ  
Այս նեղ, վակուած վանդակում:

### 24. Զ Ի

Զին ընտանի կենդանիներից ամենապեղեցիկն է: Նրա մար-  
մինը ծածկուած է կարճ, կոկիկ մազերով: Պարանոցի վրայ ունի  
երկար բաշ, որի մի փունջը՝ փոքրիկ ականջների միջով իջնում  
է զէսի ճակատը: Զիու ագին (աղօչը) ծածկուած է երկար մազե-  
րով: Զիերը լինում են զանազան գոյնի — սև, կարմիր, մոխրա-

գոյն, սպիտակ, չալ: Բարակ, զեղեցիկ ոտների վրայ մատների  
տեղ կան սմբակները. սմբակներին երկաթէ պայտեր են խփում,  
որ ոտները չվնասուեն:



Զին շատ խելացի կենդանի է: Նա ճանաշում է իւր տիրոջը  
և կատարում նրա հրամանները: Մարդս նրանցից շատ օգուտ-  
ներ է ստանում:

### Ք Ր Ե Ւ Ա Ր Վ Ա Ր Թ Ի Ւ Ն Ե Բ

19. Արտազրեցէք «Զի» յօդուածից բոլոր հասարակ գոյական անունները:

20. Արտազրեցէք հետեւալ հաւաքական գոյական անունները:

Հօտ: Գունդ: Անտառ: Ջոկ: Ջօրք: Երամ: Վոհմակ: Հորան: Ամբոխ: Ժողովուրդ:

21. Արտազրեցէք հետեւալ նախաղասութիւնները և վակագծերի մէջ  
հարցեր աւելացրէք: Հարցերի տակ զիծ քաշեցէք:

Քահանան (ի՞նչ է անում) սպոֆում է: Աստուած (ի՞նչպէս  
է) ողորմած է: Վարդը (ի՞նչ է) ծաղիկ է: Մարդը (....) մուա-  
ծում է: Ոչխարը (....) մայում է: Արծաթը (....) մետաղ է:  
Աշակերտը (....) աշխատաէր է: Երկիքը (....) կլոր է: Օրը  
(....) բացուցաւ: Կրակը (....) հանգաւ:


## 25. ԶԻՆ ԵՒ ԷՇԸ

Մի բենաւորուած էշ և մի պարապ ձի միասին ճանապարհ էին գնում: Խեղճ էշը տնքում էր իւր ծանր բեռան տակ:

— Աղաշում եմ քիզ, — խնդրեց նա ձիուն. — օգնիր ինձ, բեռից մի քիչ գույ վեր առ:

Զին ականջ շգրեց իւր ընկերոջ աղաշանիքին: Ճանապարհին էշը վայր ընկաւ և շունչը վշեց: Տէրը վեր առաւ իշխ բեռը, նրա կաշին էլ քերթեց և ձիուն բեռնեց:

— Վայ ինձ, — հառաշեց ձին. — Եթէ հս օգնէի խեղճ իշխն, նա կենդանի կը մար և իմ բեռն էլ այսրան ծանր շէր լինի:



## 26. ԿՈՎ

Կովն էլ, ձիու նման, ընտանի չորրոտանի կենդանի է: Նրա վլուխը լայն է և ունի երկար պոպեր: Կովը պոպերով պաշտպանում է շներից ու զայլերից — նրանցով հարու է տալիս: Նրա ողնաշարը դուրս ցցուած է, կողերը փրուած, ոտները կարճ, պոչը երկար՝ ծայրը փնջամագ: Խւրաբանչիւր ոտի վրայ ունի մի մի զոյտ կճղակներ:

Կովը խոտակեր կենդանի է. բայց նա իւր կերակուրը մի անդամից չի ուտում, վերջացնում. առաջ խոտը բերանն է առնում և առանց ծամելու կուլ տալիս. քիչ յետոյ կուլ տուտծը

նորից յետ է զալիս բերանը և այս անգամ կովը լաւ ծամում, որոնցում է ու զարձեալ կուլ տալիս:

Կովը մարդուն համեղ կաթն է տալիս: Կաթնից պատրաստում են մածուն, թան, իւղ և պանիր:

## 27. ԿԹԵԼ ՈՒ ՀԱՐԵԼ

— Ասա, տեսնեմ, մեր զիւղերում կովերն ինչպէս են կթում:

— Ահա այսպէս են կթում.

Հորթը կապում մօր ծնկից,

ծիծը խլում զաւակից,

կովկիթն իրանց ձեռքն առնում,

Ապա կողրին կը կըզում —

Փը շշ, բը ժժ...

Փը շշ, բը ժժ...

Ահա այսպէս են կթում,

Փորրիկ հորթին լացացնում:

— Ո՞նց են հարում խնոցին.

Հինց այսօր էլ հարեցին:

— Ահա այսպէս հարեցին.

Թոկը ծառից կապեցին,

Հաստ խնոցին կախեցին,

երկու օրուայ հաւարոը

նրա մէջը ածեցին,

Տար ու հով ջուր խառնեցին

եւ ծայրերից բռնելով,

Տարան, բերին, շարժեցին՝

Թը բիկ, շը բիկ...

Թը բիկ, շը բիկ...

Ահա այսպէս հարեցին,

Դեղին կարագ հանեցին:

28. Կ Թ Ո Ւ Կ Ո Վ

Մարդու մէկը մի կով ունէր: Նա օրական մի կճուճ կաթն էր տալիս իւր տիրոջը: Մի անգամ այդ մարդու մօտ հիւրեր պէտք է զային. նրան շատ կաթն էր հարկաւոր. այդ պատճառով նա տասն օր չկթեց իւր կովը, կարծելով, թէ տասներորդ օրը կովը տասը կճուճ կաթ միանգամից կըտայ: Բայց որբան զարմացաւ խեղճ մարդը, երբ վերջին օրը կովն առաջուանից քիչ կաթ տուեց, որովհետեւ երկար ժամանակ չկթելուց նրա կաթը ցամաքել էր:

Կ Ր Շ Ի Ո Ւ Վ Ե Բ Ք Փ Ո Ւ Թ Ւ Ւ Ն Ե Ւ

22. Արտագրեցէք հետեւալ նախաղասութիւնները և ստորոգեալ ների տակ գիծ քաշեցէք:


Կովը որոժում է: Զին վազում է: Խոտը շորացաւ: Ոզնին կենդանի է: Թիթեռը միջատ է: Պատկերը զեղեցիկ է: Երկինքն ամպամած է: Հիւրերը կըզան: Գետը ցամաքեց: Մարդը զարմացաւ: Գիղացին հնձում է:

23. Արտագրեցէք նոյնը յոգնակի թուով: Ստորոգեալների տակ դարձեալ գիծ քաշեցէք:

Օ ք ի ն ա կ: — Կովերը որոժում են:

24. Արտագրեցէք առանձին առանձին յատուկ, հասարակ և հաւաքական գոյտիկան անունները:

Յարութիւն, երկաթ: Կամար: Ձոկ: Մարզարիտ: Եղան: Անտառ: Ռոկի: Մարմին: Հրաշեայ: Հեղինէ: Մատիտ: Հրանոյշ: Գունդ: Զօրք: Հայկունի: Արամ: Թուղթ: Եկեղեցի: Մուկուս: Կոր: Մասիս: Սար: Գետ: Աստղ:



26. Գ Ա Ռ Ո Ղ Գ Ա Յ Լ Ի Մ Ո Ր Թ Ո Վ

Մի օր մէկ զառը, չպիտեմ ինչ էր,  
Խելքին ինչ տեսակ քամի էր փշել,  
Գցեց իւր վրայ մի զայլի մորթի,  
Դիաց, խառնուեցաւ հետը իւր հօտի:


Բայց երբ շների աշքովն ընկաւ,  
Ասին՝ անտառից ահա զայլ եկաւ,  
Գոռում-գոչումով վրայ վազեցին,  
Բերաններին առան ու գրգռըցեցին:

Լաւ էր, որ շուտով հովիւր տեսաւ,  
Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ,  
Ու խեղճ զառնուկը կատղած շների  
Սուր ատամներից հազիւ փրկուեցաւ:

Եւ մեր զառը հազիւ-հազ,  
Արինաթաթախ ու նուազ,  
Թոյլ ոսները քաշ տալով  
Հասաւ զո՞լ մի կերպով:

### 30. Ա Գ ՈՒ Ա Ի

Ագուալը տեսաւ, որ սիրամարզները շատ զեղեցիկ են, վի-  
տուքներն այնպէս փայլուն, զոյնզոյն, որ կարծես թաղաւորի  
ծիրանի լինին:



— Ինչո՞ւ եմ ևս այս սկ ու  
յիմար ագուաների շարքն ըն-  
կել, — մտածեց նա. — արի, ես  
էլ այդպիսի սիրուն փետուր-  
ներով զարգարուիմ. սիրա-  
մարզներն ինձ սիրով կընդու-  
նեն իրանց մէջ, իսկ անճոռնի  
աղուաներն, ինձ նայելով,  
զարմացած, հիացած կըման:

Եւ սիրամարզի սիրուն փետուրներ ճարելով՝ գուղուեց-զար-  
զարուեց ու զնաց, սիրամարզների հետ խառնուեցաւ, Բայց այն-  
տեղ նրան շուտով ճանաչեցին. սիրամարզները վրայ թափուե-  
ցան, կտցահարեցին, կեզծ փետուրների հետ խոկականներն էլ  
պոկեցին և իրանց միջից դուրս արին:

Ենարգուած, փետուրներից զրկուած աղուալը զնաց իւր աղ-  
զականների մօտ, բայց նրանք էլ երես զարձրին և շընդունեցին  
նրան:

### 31. Փ Ի Ղ

Հնդկացին մի փիդունէր: Տէրը նրան շատ վատ էր կերտ-  
կրում և շարունակ զործ անել էր տալիս: Մի օր էլ փիզը բարկա-  
ցաւ և իւր տիրոջը ոտնատակ տուեց, սպանեց: Հնդկացու կինը  
արտասունըն աշրերին բերեց իւր որդոցը, զցեց փղի ոտների  
տակ ու ասաց.

— Փիզ, դու սպանեցիր հօրը, սրանց էլ սպանիր:

Փիզը նայեց մանուկներին, յետոյ ամենից մեծին կնճիթով  
վեր առաւ, զըեց իւր պարանոցի վրայ և այնուհետև սկսեց նրան  
հնագանդուել և աշխատել նրա համար:

### 32. ՓԻՂ ԵՒ ՔՈԹՈԹ

Մէկ փիզ առած ման կածէին  
Փողոցներից անցրնելով,  
Յանկարծ բոթոթ մի կռուասէր  
Վրայ վազեց խիստ հաշելով:  
— Չայնդ կտրիր, զրացի եղայր,  
Ասաց զամրուը մեր բոթոթին.—  
«Զիս տեսնում, որ ծաղը եղար  
Բոլոր շների զու առաջին:  
«Դու ով ես և փիզը ով.  
«Ահա բո հերդ է բոնում,  
«Իսկ նա հանգարտ և անխոռով  
«Հաշելուդ էլ ուշ չէ դնում»:  
— Հա-հա, հա-հա, դու չիմացար,  
Պատասխանեց մեր բոթոթը,—  
«Ու իմ միտրը չհասկացար:  
«Հեռուից կանչեմ, կռուեմ հետը,  
«Որ մեծ բանի մէջ երևամ,  
«Ուրիշներին էլ ասել տամ.  
— Տեսէր, բոթոթն ինչպէս բազ է,  
«Որ փղի զէմ էլ կըհաշէ»:

### Գ Ր Ա Խ Ա Բ Վ Ա Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

25. Արտագրեցէք հետեւել նիւթ ական առարկաների անունները:
- Աղ: Բամբակ: Շաբար: Հնուակ: Մըինզ: Մեխակ: Վարդ: Փե-  
տուր: Ծիրան: Մարդ: Արօր: Երկիր: Կացին: Սանձ: Փայտ:
26. Արտագրեցէք հետեւել մտաւոր առարկաների անունները:
- Հոգի: Հրեշտակ: Եռանդ: Քաջութիւն: Ապրուստ: Խմասու-  
թիւն: Ճուղութիւն: Կամք: Երջանկութիւն: Մէր: Ատելութիւն:
27. Արտագրեցէք և հարցերին համաձայն ստորոգեալներ առելացրէք:

Ժիծեռնակը (ի՞նչ է անում) ծըլըլուս է: Գորտը (ի՞նչ է անում) .....: Մշակը (ի՞նչ կանէ) .....: Ազուրը (ի՞նչ է) .....: Կօչկակարը (ի՞նչ արա) .....: Հոնձը (ի՞նչ եղա) .....: Ճովը (ի՞նչպէս է) .....: Մ'եղը (ի՞նչպէս է) .....

### 33. ՈՉԽԱԲՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Մի անգամ գայլերն ասացին ոչխաբներին.

—Մեղքերս ինչ թարցնենք—մենք ձեզ հետ շատ վատ ենք վարւում և անմեղ տեղը ձեր արիւնը թափում. դուք էլ, ինարիէ, մեղանից վախենում էք և խիստ ասում էք մեզ: Բայց զիտէք զբանում ով է մեղաւոր—ձեր չար շները. նրանք միշտ աշխատում են մեզ ջնջել, կոտորել, էհ, մենք էլ մեր վրէժը ձեղանից ենք հանում: Եկէք, լսեցէք մեզ, այդ շներից թողէք, հեռացէք. մենք ձեզ միշտ կըպաշտպանենք:

Յիմար ոչխաբները հաւատացին նրանց և ծածուկ հեռացան շներից: Գայլերն էլ հէնց այդ էին ուզում. նրանք վրայ թափուեցան, անպաշտպան ոչխաբներին խեղեցին ու կիրան:



### 34. ՊԱՌԱԻՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Քաղցած գայլը որսի էք ման գալիս: Գիւղի մօտով անցնելիս՝ յանկարծ լսեց, որ մի խըճիթում երեխան լաց է լինում, իսկ պառաւ տատն ասում է նրան.

—Զայնդ կտրիք, թէ չէ քեզ գայլին կըտամ:

Գայլը կանդ առաւ և այլիս չհեռացաւ խըճիթի մօտից: Նա սպասում էր, որ պառաւը երեխային իրան տայ: Սպասեց, սպասեց և յանկարծ նրա ականջին հասաւ պառաւի ձայնը, որ այս անդամ ասում էր:

—Մի լար, գառնուկս, ևս քեզ գայլին չեմ տալ. նա գայ թէ չէ, իսկոյն կըսպանենք:

«Ինչպէս երեւում է, այստեղ ինչ որ ասում են, նրա հակառակն են կատարում», — մտածեց գայլը և թողեց, հեռացաւ զիւղից:

### 35. Ա Բ Ա Գ Ի Լ

Ա.

Արագիլները կանգնած էին իրանց բնի վրայ, գլուխները մէկ երկինք էին բարձրացնում, մէկ երկիք խոնարհում, երգում, կրկլացնում:

—Եյդ ինձ են բարե տալիս,—ասում է Մարիամը:  
— 2է, ինձ,—հակառակում է Արախնը:  
— Երկսիդ էլ են բարեւում, ամրող զիւղին էլ,—ասաց տատը և նրանց վէճը վերջացրեց:

—Տես, տատի, ծտերի ինչպէս ուրախացել են, ասաց Արախնը.—ինչպէս բաղցը ձայնով ծըլվրում են:

— Ուրախացել են, անուշիկս, ուրախացել. չէք տեսնում, քանի հազար ծտեր արագիլի բնի ցախերի արանքումն են իրանց համար բուն շինել: ծտերը լաւ զիտեն, որ արագիլի ահից ոչ ուրուր, ոչ կատու և ոչ մի ուրիշ թշնամի չի կարող նրանց բնին մօտենալ, նրանց ձուերը խմել կամ ճաներն ուտել: Հէնց դրա համար է, որ արագիլների գալով պստիկ ծտերն այնպէս ուրախանում են:

Բ.

— Տատի, — հարցրեց մի օր Մարիամը պառաւին. — մեր զիւղը արագիլներով լիրն է, այդքան կերակուր զրանք որտեղից են գտնում:

Մեր դաշտերը, հոգիս, լիրն են օձերով. ճահիճների գորտերն իրանց կըուկրուցով զլուխ են տանում. արտերի մէջ անպիտան միները հաղար տեղ ծակեր են բաց արել. եթէ արագիլը չինէր, մենք ցորենի երես չէինք տեսնիլ:

— Քա օձն արագիլին չի կծում:

— Ջատ էլ ուզում է, շատ էլ հետր կոռի է բռնուում, բայց միշտ յաղթուում է:

— Ի՞նչպէս:

— Արագիլը թռչելիս վերեից տեսնում է օձին և իջնում, նրա զլիխն կտուցով խփում է: Օձը վշշացնում է, վրայ պըրծնում, աշխատում է արագիլի բաց ոտք կծել: Արագիլն իւր թեփ ծայրն է օձի բերանին մօտեցնում ու անզագար նրա զլիխն կտցում: Կացում է, կտցում, այնքան կրտկրտալով խփում է, մինչև նրա զլուխը ցրում է: Օձը երկար ու ձիգ փռում է դաշտի վրայ: Յետոյ արագիլն օձի մէջ տեղից բռնում է և բերում բռնը, բաժին-բաժին է անում, ձագերին ուտացնում, ինքն էլ կշտանում:



### ԳՐԵՒԹԻ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

28. Արտագրեցէք առանձին-առանձին նիւթական և մտաւոք առարկաների անունները:

Միտք: Կարագ: Եղոնգ: Քանասիրութիւն: Բժշկութիւն: Ժաղիկ: Հող: Ջուր: Հրեշտակ: Եռանդ: Վէժ: Մանզաղ: Ացօր: Գութան: Գարուն: Ոյժ: Աշուն: Ջութակ: Դուր: Վաստակ: Տակառ: Ծիծաղ: Հանգստութիւն: Հատիկ:

29. Արտագրեցէք «Ռշխարներն ու գայլերը» յօդուածը եղակի թուով:

30. Հետեւեալ նախաղասութիւններից արտագրեցէք ստորագեալները լը ացուցիչ բառերի հետ: Ստորոգեալի և լրացուցիչ բառի մէջ հարցեր գրեցէք:

Եղբայրս սպասում է ընկերոջը: Սաթենիկը ջոր ոերեց եղբօրը: Որտորդը հրացանով արջին սպանեց: Աշակերտը սովորում է ղասը: Ուսուցիչը պատժեց աշակերտին: Դարբինը մուրճով երկաթ է ծեծում: Հայրս ինձ խաղալիք զնեց:

Օքինակ:— Սպասում է (ո՞ւմ) ընկերոջը: Բերեց (ի՞նչ) ջոր (ո՞ւմ) եղբօրը:

### ՅԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆՈՒ ԵՐԳԸ

Ճիծեռնակ, Ճիծեռնակ,  
Դու գարնան սիրուն Ճիծնակ,  
Դէպի ուր, ինձ ասա,  
Թոշում ես այդպէս արագ:

Ախ, թոիր, Ճիծեռնակ,  
Ծնած տեղս—Աշտարակ,  
Անդ շինիր բո բոնիր,  
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեսը  
Հայր ունիմ սղաւոր,  
Որ միակ իւր որդուն  
Սպասում է օրէցօր:

Երբ տեսնես զու նրան,  
Ինձնից շատ բարի արա.  
Ասա, թող նստի լայ  
Իւր անբաղդ որդու վրայ:

Գու պատմէ, թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղճ եմ հս,  
Միշտ լալով, ողբալով,  
Կեանըս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը  
Մութ է շրջում արեգը,  
Գիշերը թաց աշրիս  
Բոնը մօտ չի գալիս:

Ջուտով սառ հողի տակ  
Պրպառկեմ այստեղ մինակ,  
Թողնելով հօրս սըտում  
Միշտ ցաւալի լիշտառակ:

Դէհ, սիրուն Ճիծեռնակ,  
Հեռացիր, թոիր արագ  
Դէպի Հայոց երկիրը,  
Ծնած տեղս Աշտարակ:

### 37. ԳԱՅԼԸ ԵՒ ՋՈՒՆԸ

Նիհար, բաղցած զայլը՝ զիւղի մօտով անցնելիս՝ պատահեց  
մի զեր շան և հարցընց նրան.

— Այ շուն, ասա, խնդրեմ, զուք ձեր կերակուրը որտեղից  
էք ճարում:

— Մարդիկ են տալիս, — պատասխանեց շունը:

— Երեփ զուք շատ դժուար ծառայութիւն էք անում նրանց:

— Ոչ, — պատասխանեց շունը. — մեր զործը դժուար չէ: Մենք  
միայն զիշերները նրանց տունն ենք պահպանում:

— Ուրեմն միայն զրա համար են ձեզ կերակում, — ասաց  
զայլը: — Եթի լինի, որ ես էլ զամ մարդկանց մօտ ծառայելու, թէ  
չէ մենք մեծ դժուարութեամբ ենք կերակուր ձեռք բերում:

— Ինչո՞ւ չէ, զնանիք, . . . ասաց շունը. — իմ տէրը քեզ էլ կըկե-  
րակը:

Գայլն ուրախ-ուրախ վազեց շան յետեից: Բայց զուան մօտ  
հա նկատեց, որ շան պարանոցի մազերը պոկուած են:

— Այդ ինչից է, — հարցընց նա:

— Ե՞ն, այնպէս, — պատասխանեց շունը:

— Ի՞նչպէս թէ այնպէս:

— Այնպէս, էլի, շղթայից է: Գու շգիտես, որ ցերեկները  
ինձ շղթայով կապում են:

— Կապում են, — ասաց զայլն ու կանգ առաւ. — Դէ՞ն, ուրեմն  
մաս բարով: Աւելի լաւ է ես միշտ նիհար, բայց ակատ լինիմ,  
բանթէ փորիս համար ուրիշների զերին զանամ:

### 38. ԼՈՒՄՆԱՀԱՉ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Յօղարը  
Միշտ հաշում է լուսնի վրան.  
Միթէ պայծառ լուսնեակը  
Մէկ վնաս է տալիս նրան:

— Ոչ, որդեհակ իմ, ոչ թէ վնաս,

Այլ լոյս, միայն լոյս է տալիս.

Խոկ շանն, իրրե զայլի ցեղի,

Լոյս զիշերը զիւր չի դալիս:

Բայց լուսինը խօմ չգիտէ,

Որ իւր վրայ հաշողներ կան.

Նա լուռ ու մունջ, բազ բոլորած,

Զարունակում է իւր ճամպան:

Մենք էլ, որդեհակ, լուսնի նման

Պէտք է լոյս տանիք մութ աշխարհին

Եւ համարենք, թէ չենք լուսմ

Մեզ վրայ զուք հաշողներին:

### 39. ԳԱՅԼԸ ԵՒ ՍԿՐԻԲ



Սկիւար, ծառի վրայ թռչկոտելիս, յանկարծ վայր ընկառ  
մի զայլի վրայ, որ քնած էք ծառ-  
ուի տակին:

Գայլը վեր թռառ, բանեց  
նրան և ուզում էք տակ: Սկիւան  
սկսեց ազաշել.

— Թող ինձ:

— Լաւ, — ասաց զայլը, — ես  
քեզ կըթողնեմ, եթէ միայն ինձ տսես, թէ պատճառն ինչ է, որ  
ես միշտ տիտոր-տրատում եմ, խոկ զուք, սկիւաներդ, այգակն  
ուրախ էք և շարունակ թռչկոտում ու խաղում էք ծառերի վրայ:

— Առաջ թող ինձ բարձրանամ ծառը, — ասաց սկիւար, —  
այնտեղից կըտամ բու պատասխանը. թէ չէ ես վախենում եմ  
բեզանից:

Գայլը բաց թողեց: Սկիւար ծառը բարձրացաւ և այնտե-  
ղից ասաց.

—Քո տիրութիւնը նրանից է, որ զու շար ես: 2արեղն ուրախութիւն չունին: Խոկ մենք ուրախ ենք նրա համար, որ բարի ենք և ոչ որի վատութիւն չենք անում:

#### ԳՐԵՒԱՐ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

31. Հետեւալ նախաղասութիւնների մէջ հարցերին համապատասխան լրացուցիչ բառեր աւելացրէք:

Գիշացին վարում՝ է (ի՞նչը) ...., (ի՞նչո՞վ) ....: Կինն աւելից (ի՞նչը) ...., (ի՞նչո՞վ) ....: Հօրեղբայրս (ո՞ւմ) .... ընծայեց (ի՞նչ) .... Արտաշէսը զրօնում՝ է (ո՞ւմ հետի) ....: Շուշանիկը նամակ ստացաւ (ո՞ւմնից) ....: Ատախծագործը սեղանը շինում՝ է (ի՞նչից) ....: Շոնը հաշում՝ է (ո՞ւմ վրայ) ....: Մենք խօսում ենք (ո՞ւմ մասին) ....:

32. Արտագրեցէք և ուր սր հարկաւոր է ենթակայ, ստորոգեալ և լրացուցիչ բառեր աւելացրէք:

Հաւը .... է ածում: .... քշում է սայլը: Տատը հերիած ....: .... բոյն է շինում: .... ներկում՝ է տունը: Հացթուինը .... է թխում: .... ժամացոյց է շինում: Շոնը .... տունը: Աշակերտը զրում՝ է ....:

33. Արտագրեցէք «Դայլը և սկիւռը» յօդուածը յոդնակի թուով:

#### 40. ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ԶԵՐ ԲԱՐԵԿԱՄՄՆԵՐԻՆ

Ֆրանտիայում, դաշտերի և անտառների մէջ, սիւներ են տնկած և այդ սիւների վրայ կպցըած են տախտակներ, որտեղ զրուած է.

«Ողնին կերակրուում է մլներով, խխունչներով և որդերով: 2սպանէր ողնիներին»:

«Խլուրդը միշտ զանազան վնասակար միջատներով, որդերով ու թրթուրներով է կերակրուում: Նրա ստամոքսում երբէք բուսեղին կերակուր չէ գտնուած: 2սպանէր խլուրդներին»:

«Թրթուրները մեծ վնաս են հասցնուամ ժողովրդին: Թոշունները շափազանց մեծ քանակութեամբ թրթուրներ են ոչնչացնում: Մանուկներ, ձուեր և ձագեր չհանէր թոշունների բներից: 2աւերէք նրանց բները»:

#### 41. ՄԵՂՈՒՆ ԵՒ ՄՐՋՅ

Անուանի խորքում մեղուն իւր համար ծառի փշակում, զետնից ոչ բարձր,

Մի բուն էր շինել,

Մէջը ձագ հանել

Եւ անուշ մեղրով

Բճիճը լցըել:

2զիահմ ինչպէս, մի օր արջուկը Առաւ այդ մեղրի անուշիկ հոտը,

Մըմըմթաց, փնթփնթաց,

ծառն ի վեր կանգնեց

Եւ երկու թաթեր

Բնի մէջ կոխեց:

Մեղուն տըգտըզաց, տըզզացին ձագեր,

Բայց արջը շքաշեց իւր բրդոտ թաթեր,

Քանդեց ողջ բունը,

Զարդեց խեղճ ձագեր,

Հանեց բճիճը,

Լափեց անհամբեր:

Մեղուն՝ երբ տեսաւ իրան ձագուկներ Այս անգութ արջի ոտքի տակ ճգմուած՝

Դըոդըուաց տխուր,

Խայթեց նրա աշը

Եւ ինըն էլ անշունչ

Բնկաւ ծառի տակ:

## 42. ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԵՐՊԱՐՄՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ




Ամառը կազմամբի տերևների վրայ դուք տեսած կը լինիք կանաչպոյն որդունքներ, որոնք թրթուր են կոչում: Այդ թրթուրները կերակրում են կազմամբի տերևներով. նրանք շատ աղաճ են և ուրիշ բան ու գործ չունին, բացի ուտելին ու մեծանալը:

Երբ թրթուրը մեծանում է, պատեհաւորում է. այդ ժամանակ նա ոչ ուտում է, ոչ խմում, այլ անշարժ ընկած մնում է իւր տեղով:

Միքանի օրից յետոյ պատեհանի միջից զուրս է թռչում թիթեռը: Սա ձուեր է՝ ածում, իսկ այդ ձուաններից զուրս են զալիս աղաճ թրթուրներ: Աշնանը թիթեռը ստուգում է:

Այսպէս կերպարանափոխում են բոլոր թիթեռները, բգեցները, ճանճերը, մեղուները և պիծակները: Միջատը ձու է ածում, ձուաններից զուրս են զալիս որդեր կամ թրթուրներ, որդերը պատեհաւորում են, իսկ պատեհաններից զուրս է սողում իսկական միջադը:

## 43. ՄԵԴՈՒՆ ԵՒ ԱՐԺԻՒԼ



— Ձատ ողորմելի ես զու, —  
ասաց մի օր հպարտ արծիւր  
համեստ մեղալին. — Հնայելով  
որ ամրոջ կիանքումդ տանջում  
ես, բայց և այնպէս ըեկ  
ոչ որ չի ճանաշում, որովհետի  
զուր մի փոքրիկ մեղրախո-  
րիսխի վրայ հազար հոգով էք  
աշխատում: Ո՞վ կարող է որո-  
շել, թէ որ մասն է ըս շինածը:

— Ինչիս է հարկաւոր այդ, — համեստովթեամբ պատասխանեց մեղուն. — Ինչ օգուտ, եթէ ճանաչեն ինձ: Բաւական է, որ ճանաշում ու սիրում են մեր մեղրը և ես ինձ բաղդասոր եմ զգում, որ մեղրախորիսխի մէջ մի կաթիլ էլ իմ մեղրից կայ:

— Հապան մէկ նայիր ինձ, — ասաց արծիւր. — Ինց որ ես երեւում եմ երկնակամարի երեսին, իսկոյն բոլորը նկատում ու ճանաշում են ինձ. զագաններն ու թռչունները աշը չեն հեռացնում ինձանից. Հոգիւների քունն անգամ աշբերից փախչում է: Ահա այդպէս բոլորը՝ թէ մեծ, և թէ փոքր, լաւ ճանաշում են ինձ:

— Եյ՛, ճանաշում են, որովհետև վախինում են բեզանից, — ասաց մեղուն:

## ԳՐԵՒԹԻ ՎԵՐՓՈԽԹԻՒՆԵՐ

34. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և լրացուցիչ բառերի տակ զիծ քաշեցէք:

Ոզնին կերպակրում է մկներով, խփունջներով և որդերով: Խլուրդն ուտում է որդեր և թրթուրներ: Թրթուրները վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունները թրթուրներին ոչնչացնում են:

35. Հետեւալ գոյական անունների մօտ որպիսութիւն ցայց տուող բառեր (ածական անուններ) աւելացրէք:

Բարձր (ի՞նչպիսի) տոն: Խելօք (ի՞նչպիսի) երեխայ: .... (ի՞նչպիսի) թռչուն: .... (ի՞նչպիսի) աշակերտ: .... (ի՞նչպիսի) միղու: .... (ի՞նչպիսի) վարդ: .... (ի՞նչպիսի) զիշեր: ... (ի՞նչպիսի) զիռք: .... (ի՞նչպիսի) ժամացոյց: .... (ի՞նչպիսի) շուն:

36. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և որոշիչ (յատկացուցիչ) բառերի տակ զիծ քաշեցէք:

Պայծառ արեւը տաքացնում է երկիրը: Մենք մի հաստարիմ շուն ունինք: Կոյք աղքատը ողորմութիւն է խնդրում, ֆոք-րիկ երեխան լալիս է: Ուսուցիչը պատժում է շաբ աշակերտներին: Ես մի զեղեցիկ պատկերազարդ զիքը զնեցի: Զին ընտանի խոտակեր կենդանի է: Մանուշակը զեղեցիկ հոտաւէտ ծաղիկ է: Աղամանդը թանկազին քար է:

#### 44. ՄԱՐԴՆ ՈՒ ՉԵՐԱՄՌ



Չերամը մետաքս էր շինում և գոյնզգոյն կոկոնները կախութում կաղնու թարմ ճղներից կապած խուրձի վրայ, իսկ սարդը, տան մի անկիւնում քաշուած, իւր ցանցն էր հիւսում և ծիծագում շերամի վրայ:


— Չերամ եղբայր, — ասում էր նա, — զու շատ դանդաղ ես տանում քո զործը և շինածդ էլ մի բանի նման չէ չիսկ ես, նայիր, տես, ինչ զեղեցիկ բան եմ շինել և տես, ինչքան երկար են իմ թելերը:

Չերամը պատասխանեց.

— Մարդ եղբայր, զու զիտես, ինչ է նշանակում բարութիւն:

— Ո՞չ, չգիտեմ:

— Այդ նրանից է, որ զու չար ես, քո զործն էլ շարութեան զործ է: Դու քո երկար թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանձերին որսաս ու ծծես նրանց արիւնը, իսկ իմ զործը բոլորովին ուրիշ բան է, քո բնութիւնից և խելքից վեր բան է:



#### 45. ՄԱՐԴԸ ԵՒ ՕԶԸ

(ՀԵՔԻԱՅԹ)

Ա.

Մի ձիաւոր երկար նիզակը ձեռքին կամաց-կամաց առաջ էր գնում դաշտի միջով: Ճանապարհից ոչ հեռու նա նկատեց մի խարոյկ. այնտեղ թէն կրակ արդէն չկար, բայց տաք ածուխների վրայ կծկուած թըշտում էր մի ահապին օձ: Օձը տեսաւ մարդուն և աղաչնց.

— Մարդ Աստուծոյ, օգնիր, աղատիր ինձ մահից:

Մարդը խղճաց օձին և իւր երկար նիզակը մեկնեց զէպի խարոյկը: օձը նրա վրայով վեր բարձրացաւ թէ չէ, փաթաթուեց մարդու պարանոցով և սկսեց սաստիկ սեղմել:

— Ի՞նչ ես անում, — հազիւ շշնչաց մարդը:

— Միթէ չես զգում, թէ ինչ եմ անում, — պատասխանեց օձը: — Ես կամենում եմ քեզ խեղմել:

— Ի՞նչ, ողորմած Աստուծօ: 2է որ ես քեզ մահից վրկեցի:

— Ճիշտ է, բայց աշխարհումս միշտ լաւութեան զէմ վատութիւն են զործում, ես էլ այդպէս պէտք է անեմ:

— 2է, օձ, — վրայ բերեց մարդը: — այդ ճշմարիտ չէ: բոլորն այդպէս չեն, միայն զու ես այդպիսի անարդար բան բռնում:

— 2է, միայն ես չեմ, բոլորն էլ այդպէս են, ֆշշաց օձը և աւելի պինդ վաթաթուեց նրա պարանոցով:

— Աղաչում եմ, բաց թող կոկորզս, — խնդրեց մարդը: — լսիր, թէ ինչ եմ ասում:

Օձը մի քիչ թոյլ թողեց:

— Երեք հոգու հարցնենր, եթէ ասածդ ճշմարիտ չէ, այն ժամանակ ինչ ուզում ես, արա, — ասաց մարդը:

— Դէն, լաւ, տեսնենր, — համաձայնուեց օձը:

Բ.

Առաջ գնացին: Օձն այնպէս պինդ էր վաթաթուել մարդու պարանոցով, որ խեղմը դժուարութեամբ էր շունչ բաշում: Մօտեցան մի առուակի և կանդ առան:

— Լսիր, այ մարուք առուակ, — ասաց մարդը: — Ես կրակից պատեցի այս օձին, իսկ սա՝ փոխանակ շնորհակալ լինելու կամենում է ինձ խեղմել: Ասում է, թէ աշխարհիս մէջ միշտ լաւութեան զէմ վատութիւն են անում: ճշմարիտ չէ:

— Ճշմարիտ չէ, — պատասխանեց առուակը: — այ, տես, որքան վճիտ և մարուք է իմ ջուրը, Գալիս են ինձ մօտ մարդիկ իրանց ձիերով, ուզտերով և ես նրանց բոլորին թարմ, մարուք ջուր եմ տալիս: Եթէ ես չլինիմ, նրանք ծարաւից կը մեռնեն այս ամայի

գաշտում: Բայց գիտես նրանք ինչպէս են զուրս զալիս իմ՝ լաւութեան տակից: Հեռանալիս ամեն տեսակ ազը ու կեղտով չուրս կեղտուում, փչացնում են:

Եյս որ լսեց օձը, սկսեց տեսլի պինդ սեղմել մարզու կոկորդը: Առաջ զնացին:

Դ.

Ահա նրանք հասան մի բարձր ծառի և կանդ առան: Մարզը պատմեց նրան, թէ զործն ինչում է: Ծառն ասաց:

— Ճշմարիտ է տառւմ օձը: Եւ ահա, թէ ինչու: Գու ինքդ էլ լու գիտես, որ այս գաշտում ճանապարհորդները, բացի իմ ստուերից, ուրիշ տեղ չունին հանգստանալու: Բայց նրանք հանգստանալուց և իմ պտուղները վայելելուց յետոյ՝ տերեներս պոկտում, ճղներս կոտրատում, կեղես քերթում են և իրանց համար կրակ անում: Մի օր ինձ էլ, միւս քոյրերիս նման, պէտք է արմատից կտրեն, գետնին տապալեն: Ահա այս է նրանց վարմունքը իմ լաւութեան դէմ:

Օձն աւելի պինդ սեղմեց մարզու կոկորդը: Խեղճն այլևս ոչ կարող էր խօսել, ոչ շունչ բաշել, այլ միայն խըսքը ռացնում էր: Յանկարծ նա նկատեց, որ հոռուից մի զայլ է վազում: Մարզը ձեռքով նշան արաւ օձին: Օձը թիշ բաց թողեց նրա կոկորդը:

— Սպասիր, զայլ,—կանչեց մարզը: — թեզ բան ունիմ տաելու:

— Լաւ, ասան, միայն ինձ շատ մի մօտենալ, — ասաց վախու զայլը և կանդ առաւ:

Դ.

Մարզն ու օձը թիշ մօտեցան զայլին և պատմեցին բոլորը: Աւրեմն դու օձին կբակից աղատել ես, — հարցը զայլը մարդուն: — Քա մի թիշ գժուար հաւատալու բան է:

Մարզն սկսեց մէկ-մէկ պատմել, թէ ինչպէս էր եղել:

— Ո՛չ, ոչ, — պատասխանեց նրան զայլը: — պատմեն աւելորդ է: աւելի լու է ցոյց տուր, թէ ինչպէս արիր ալդ:

Մարզը նիզակը մեկնեց դէպի գետին և օձը նրա վրայով ցած սողաց:

— Գէհ, այժմ ինչ կասես, — հարցը զայլին:

— Թշնամին ոտներիդ տակ է և զու գեռ հարցնում ես, թէ ինչ պէտք է անես: Սպասիր նրան նիզակովդ, — ասաց զայլը մարդուն:

— Ո՛չ, — պատասխանեց մարզը: — միայն գաղաններն են այդպէս վարւում, իսկ մեզ Աստուած պատուիրում է սիրել մեր թշնամիներին և ներել նրանց: Մնաս բարե, օձ, ողջ կաց և միտդ պահիր այս: — Ասաց մարզը և փախաւ, օձի ձեռքից աղատուեց:

#### 46. Պ Ա Ր Տ Է Զ

Պարտէզները շինում են տների մօտ և շրջապատում ցանկապատով կամ ճաղերով: Պարտէզներում տնկում են պրղատու և հասարակ ծառեր ու թփեր, որոնք շատ անգամ գեղեցիկ ստուերախիտ ծառուղիներ են կազմում: Ծառերի մէջ մարդիկ ցանում են զանազան բանջարեղիններ և շինում զեղեցիկ ծաղկաթմբեր, որտեղ ծաղիկներ են տնկում — մեխակ, յափրուկ, կաշա, շուշան և այլն:

Պարտէզը մշակում է նրա տէրը կամ պարտիզանը. Հողը պարարտացնում են աղբով, իսկ չոր եղանակին չրում են: Պարտէզներին վիաս են տալիս թրթուղները, որդերը, թռչունները և ընամի կենդանիները:

#### 47. Բ Ո Ս Տ Ա Ն 2 Ի

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում Գետնի երեսից, այրում, տապակում:

Ո՛չ շունն է հաշում, ոչ ճիճին երգում, Գորտն էլ է լոհի, էլ չի կըուկըռում:

Ամենըն էլ փախել, հով տեղ են գտել, նրանց բներում լուսել, պապանձում:

Միայն մի հատիկ մարդ է երկում  
Խորլնկած դաշտում, առուի եզերում:  
Կանգնած է մարդը արևի տակին,  
Ասի ու ծունկը բաց, բահը դրած ուսին.  
Մի շապիկ միայն ունի նա հագին  
Եւ մի սպիտակ թասակ կայ զլիխին:  
— Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,  
Արևի տակին ինչու է այրում,  
— Նա բռատանչի է, բռատան է ջրում,  
Սեխն ու ձմերուկը նա է հասցնում:

#### 48. ՊԱՐՏԱՉՊԱՆՆ ՈՒ ԻՒՐ ՈՐԴԻՔԸ

Մի ծերունի պարտիպան շարունակ խրատում էր իւր որդոցը, որ աշխատասէր լինին, բայց որդիքն ականջ չէին գնում նրան: Երբ ծերունին զգաց, որ մահը մօտ է, կանչեց որդոցն ու ասաց նրանց.

— Միրելի զաւակներս, իմ ունեցած-շունեցածս այս տունն ու պարտէզն է: Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ: Բայց պարտիզում գանձ կայ թաղած: Փորեցէք և անշուշտ կըզտնէք:

ծերունու մահից յետոյ որդիքն սկսեցին փորփրել պարտէզը: Փորեցին, փորեցին, ոչինչ չգտան: բայց հետեւալ տարին պարտիզի ծառերն առատ պտուղ տուին: Այդ ժամանակ միայն նրանք հասկացան, թէ ինչ գանձի մասին էր ասում հայրը, և այնուհետև սկսեցին ջանապիրութեամբ աշխատել ու շուտով մեծ հարստութեան տէր դարձան:

#### ԳՐԱԿԱՐԱՎԱՐ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

37. Հետեւալ նախադասութիւնների մէջ աւելացրէք ու բոշիչ (յատկացուցիչ) բառեր և նրանց տակ գիծ քաշեցէք:

Հպարտ առիւծը խօսեց համեստ մեղուի հետ: .... սարդը ցանց է հիսում: .... աղուէսը հաւ փախցրեց, գայլը .... կեն-

դանի է: .... նասլաստակը .... խոտ է արածում: Կովն .... կենդանի է: Ասուած պատժում է .... մարդկանց:

38. Արտազբեցէք և պատկան եւ լուսութիւն ցոյց տուող որոշիչ (յատկացուցիչ) բառերի տակ գիծ քաշեցէք:

Իմ (ո՞ւմ) հայրը իր (ո՞ւմ) ծին ծախեց: Վարդի (ի՞նչի) նոտն ախորժեիի է: Իշխ (ո՞ւմ) ականջները երկար են: Նրա (ո՞ւմ) եղբայրը մեր (ո՞ւմ) հարեւանի (ո՞ւմ) տանի է: Արծիւր իր (ո՞ւմ) բունը հիւսում է բարձր ժայռերի (ի՞նչի) կատարին: Մեր (ո՞ւմ) տան (ի՞նչի) կտուրը հողով է ծածկուած:

39. Գրեցէք միքանի նախադասութիւն լրացուցիչ և որոշիչ (յատկացուցիչ) բառերով:

#### 49. ԾԱՌԻԿ

Այ նորատոնի իմ ծառիկ,  
Ճիւեր արա գեղեցիկ,  
Արմատ ձգէ զու հողում,  
Որ շշարժէ քեզ մըրիկ:

Ես ամեն օր քեզ համար  
Ճուր կըրերեմ սափորով  
Եւ բու տակը կըփորեմ,  
Որ զօրանաս զու շուտով:

Ծաղիկ, տերև ու պտուղ  
Թող զարդարեն բու ճիւղեր,  
Նըանց վրայ թող երգեն  
Ենոյշ ձայնով սոխակներ:

Հաստացրու բու բունը.  
Այն ժամանակ փոթորիկ  
Թող մոնչէ, որոտայ,  
Հի վնասի քեզ, ծառիկ:

#### 50. ԾԱՌԵՐԻ ՎԷՃԸ

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ իրանցից որն է լաւը: Կաղնին ասաց:

— Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատը շատ խորն է թագուած գետնի մէջ, բունս հաստ է, զագաթս մինչև երկինը է հասնում. իմ տերևները շատ գեղեցիկ են, իսկ ճղներս կարծես երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների տուաչ չեմ խոնարհում, մըրիկի տուաջ չեմ թերւում:

Խնձորենին լսեց կազմու խօսքերն ու տասց.

— Ըատ էլ մի պարծենար, սիրելի կազմի, որ դու արդքան մեծ ես և հաստ, դու այս ասա, թէ քո պտուղներն ով է զործ ածում բացի խողերից. իսկ իմ կարմիր խնձորն արքայական սեղանների վրայ անգամ տեղ ունի:

Ենում է մայրին, շարժում է իւր փշոտ զլուխը և տառմ:

— Սպասեցէք մի քիշ, շուտով կըզայ ձմեռը և դուք երկուսդ էլ կըմերկանար, իսկ ինձ վրայ այնուամենայնիւ կըման իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկրներում ապրել անկարելի է, ինձանով մարդիկ բնակարաններ են շինում և իրանց վառարանները վառում:

## 51. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ծառերն անտառում երբ շատ նեղացան  
Կացնի ձեռիցը և էլ չխմացան,  
Ինչ անեն, որ իրանց զլուխը պահեն,  
Խորհուրդ արին, որ մի հնար դտնեն:  
— Կացին ով է, որ մեզ կարողանայ  
«Զօռ անել, յաղթել, ինչ մեծ բան է նա.  
Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը. —  
«Մենք որ կոթ շտանք, կացինն ինչ է, որ  
«Յանդզնի անել մեզ կտոր-կտոր:

«Թող իմացողն ինքն իմանայ  
«Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.  
«Ով որ կոթ կըտայ պողպատէ կացնին,  
«Թող հոգոցն ասէ առաջ իւր անձին»:

## 52. ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԵՆԻ

Մի պարտիզպան երկու որդի ունէր: Մայիս ամսին հայրը նրանց մի-մի խնձորենի ընծայեց: Երկու ծառերն էլ միաշափ

և միատեսակ էին, միայն իրարից մի քիշ հեռու էին տնկած պարտիզում:

Մեծ որդին, որ մի աշխատասէր պատանի էր, սաստիկ ուրախացաւ հօր պարզեի վրայ և խկոյն սկսեց ամեն աշխատութիւն ու խնամք գործ դնել, որ ծառը լաւ աճի, զօրանալ նու ծառի վրայից թրթուրները հնացցրեց, շորս կողմի հողը նու վավկացցրեց, որ օդն ու խոնաւութիւնը մինչև նրա արմատներն համնեն:

Իսկ կրտսեր որդին, որ սաստիկ ծոյլ էր և անուշագիր, բոլորովին մոռացաւ իւր խնձորենին և սեպտեմբեր ամսին միայն, բոլորն արդէն սկսել էին խնձորեները ժողովել, նրա միտն երբ ժառանակ թրթուրներն էին կիրել, իսկ միւս մասը դեռ խակ ժամանակ թրթուրներն էին կիրել, իսկ միւս մասը դեռ իւր թափել, վշացրել, այնինչ եղբօր խնձորենու վրայ ըալին էր թափել, վշացրել, այնինչ եղբօր խնձորենի մի մասը կերպարմիր, զեղեցիկ պտուղները հեռուից անգամ երեսում էին: Քրիստոնէ էր թափել, վշացրել, աշքերին՝ մանուկը վաղեց հօր մօտ և զանգատուեց, տասուրն աշքերին՝ մանուկը վաղեց հօր մօտ և զանգատուեց, իւր թէ ինչու էր նա իրան վատ և անպառող ծառ ընծայել, իսկ եղբօրը՝ լաւը և պտղատուն:

— Զեզ երկսիզ էլ ես միենոյն տեսակ խնձորենի էի նուիրել, — բայց քո եղբայրը ոչ մի աշխատուպատասխանեց հայրը, — բայց քո եղբայրը ոչ մի աշխատութիւն և խնամք չխնայեց իւր ծառի համար, այնինչ դու ծովացար և ամսնեին ուշագրութիւն չզարձրիր քոնի վրայ:



### 53. ԽԹՁՐ ԿԱՂՆԻ ԺԱՄԻ ՏԱԿ

Խոզը՝ հաստարմատ կաղնու տակ կանգնած,  
Կերաւ կաղինը, զլուխը կախած.  
Մինչև կոկորդը կերաւ, լցուեցաւ,  
Ապա կաղնու տակ հանգիստ քնեցաւ:

Ցետոյ զարթնելով՝ բացաւ աշքերը  
Եւ բութ կնճիթով սկսաւ փորել  
Այն կաղնի ծառի հաստ արմատները,  
Որից այդ ժամին մնունդ էր առել:

— 2Է որ այդ բանը ծառին վնաս է,—  
Նրան վերեից ազռաւը կասէ.  
«Եթէ այդպիսով արմատը բանաս,  
«Նա կըշորանայ, այդ լաւ իմանաս»: X

— Իսկ ինձ ինչ վնաս, թէ կըշորանայ,—  
Ճածից ասում է նրան խոզն աղան.  
«Ես դրա մասին բնաւ չեմ ցաւում,  
«Կաղինն է իմս, նա է զիրացնում»:

Ծառը բարձրիցը՝ «Ապերախտ,—ասաց,  
«Մւստի են թափում կաղինները ցած.  
«Գէթ կարենայիր մի վերե նայել  
«Եւ կոյլ աշքովդ այդ բանն ստուգել»:

### ԳՐԵՒՈՒ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

40. Արտագրեցէք և տեղ ցոյց տուող պար ադայ ական բառերի  
տակ գիծ քաշոցէք:

Աշակերտը զնում է (ո՞ւր) ուսումնա՞րան: Պարտիզում  
(ո՞ւրեղ) զնելեցիկ ծառեր կան: Աստղերը փայլում են (ո՞ւրեղ)  
Երկնքում: Եղբայրս եկաւ (ո՞ւրեղից) օֆիլիսից: Հայրս զնաց (ո՞ւր)  
Եկեղեցի: Աշակերտները վերադառնում են (ո՞ւրեղից) սպրոցից:

Զկները լողում են (ո՞ւրեղ) ջրում: Շոգնաւը լողում է (ո՞ւրեղ)  
ծովի երեսին:

41. Արտագրեցէք և հարցերին համապատասխան տեղ ցոյց տուող պա-  
րագայական բառեր աւելացրէք:

Գիշացիները աշխատում են (ո՞ւրեղ)....: Մարդիկ ընակում  
են (ո՞ւրեղ).... Մեղուները թռչում են (ո՞ւրեղից).... (ո՞ւր) ....  
Կարմիր արեւը սարձրացաւ (ո՞ւր).... .... (ո՞ւրեղ) շատ թռչուները  
են ընակում: .... (ո՞ւրեղ) մարդիկ աղօթում են Աստծոն:

42. Հարցերին նայելով լրացրէք հետեւալ համաօտ նախադասութիւնները:  
Ես գրեցի:—Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞ւմ: Ո՞ւրեղ:  
Քոյրը զնեց:—Ո՞ւմ քոյրը: Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞ւմ համար:  
Հայրը զնաց:—Ո՞ւմ հայրը: Ո՞ւմ հետ: Ո՞ւրեղից: Ուր:  
Ռուցիչը հարցնում է: Ո՞ւմ ռուցիչը: Ի՞նչ: Ո՞ւմ: Ո՞ւրեղ:  
Մանուկը իսպում է:—Ո՞ւրեղ: Ո՞ւմ հետ:  
Օրինակ:—Դպրոցում ես երկար նամակ գրեցի քրոջս:

### 54. ԱՃԽԱՏԱՄՄՈՒԹԻՒՆ

Ա.

Մի անգամ Ազրիան կայսրը զրօնելիս պատահեց մի զառա-  
մեալ ծերունու, որ մի մատաղ թղենի էր տնկում, և ասաց նրան:

— Եթէ զու երիտասարդութիւնդ անզործ անցկացրած  
շինէիր, այժմ ստիպուած չէիր լինիլ այդ զառամեալ հաս-  
կումդ աշխատել:

— Մանկութիւնիցս սկսած՝ ես ծոյլ չեմ եղել, տէր-թագա-  
ւոր, պատասխանեց ծերունին, — և ահա մինչև ծերութիւնս էլ  
աշխատում եմ, ինչքան որ կարող եմ: Աստուած սիրում է  
աշխատանքը:

— Քանի տարեկան ես, — հարցրեց կայսրը:  
— Մօտ հարիւր, — պատասխանեց նա:

— Ի՞նչ, — բացականչեց կայսրը, — և այդ հասակումն զեռ ծառեր ես տնկում: Միթէ միտք ունիս զրանց պտուղները վայելել:

— Յոյս ունիմ, — պատասխանեց ծերունին: — Խոկ իթէ Աստուած այդ չկամենայ, գոնէ ուրիշները կըվայելեն և շնորհակալ կըլինին ինձանից. չէ որ ես էլ իմ հայրերի աշխատանքն եմ վայելել:

Այս պատասխանը դիւր եկաւ կայսերը:

— Լաւ, ասաց նա. — Իթէ զու բաղդ կունենաս այս ծառի պտուղները բաղելու, իմաց տուր ինձ:

Բ.

Մնցու միքանի տարի: Ծերունին զեռ տպբում էր և շարունակում ինսամել իւր պարտէզը, ծառը մեծացաւ, ծածկուեց ծաղիկներով և վերջապէս զարդարուեց պտուղներով:

Ծերունին բաղեց պտուղները, ընտրեց նրանից ամենալաւարը, զարսեց մի կողովի մէջ և տարաւ պալատը:

Կայսրը հեռուից նկատեց ծերունուն և հրամայեց ներս կանչել: \*

— Ի՞նչ ես կամենում, — հարցըրեց նա:

— Միքանի տարի սրանից առաջ, — ասաց ծերունին, — եթէ մտարերում է ձերզ մեծութիւնը, զուր տեսար մի ծերունու, որ իւր պարտիզում մի մատադ ծառ էր տնկում: Դուք այն ժամանակ ցանկութիւն յայտնեցիք, որ եթէ այդ ծերունուն յաջողութ բաղել այդ ծառի պտուղները, ձեզ իմաց տրուի: Ես այն ծերունին եմ և առաջ իմ աշխատանքի պտուղը:


Կայսրը սիրով ընդունեց պտուղները և մեծարեց ծերունուն:

## 65. ԱՆՏԱՌԸ ԵՒ ԱՄՈՒՍԿԸ

Փոքրիկ առուակը, որ խոխոջելով հոսում էր խիտ անտառի միջից, մի օր սկսեց տրանջալ իւր վիճակի վրայ:

— Ի՞նչ դժբաղզն եմ ես, — ասում էր նա, — այս զզուելի անտառը ծածկում է ինձանից պարզ երկինքը և թոյլ չի տալիս, որ արեգակի պայծառ ճառագայթներն ու զովարար բամին ազատ

խաղան ջրերիս հետ: Այս, ուր էր, թէ մարդիկ կորատէին, ոչնչացնէին այս զզուելի անտառը:



— Միքրելի զաւակս, — հանդաբատ պատասխանեց անտառը, — զու փոքր ես և չես հտկանում, որ իմ ստուերը պաշտպանում է քեզ արեգակից և բամուց. Իթէ իմ այս պաշտպանութիւնը չվիճէր, զու արդէն չորացած կըլինէիր նրանց ներզործութիւնից: Դեռ սպասիր, զօրացիր իմ ստուերի տակ և երբ որ կըմեծանաս, այն ժամանակ հոսիր զէպի ընդարձակ զաշար և աներկիւդ խաղան վայրուն արեգակի և զօրեղ բամու հետ:

## 56. Ա Ռ Ո Ւ Ա Կ

Լերկ բարաժայուից մի վճիտ առուակ Բղխում է մեղմիկ՝ խոխոչ հանելով.

Խորը ձորերով անցնում են արագ

Փրփրած ալիքներն արծաթի վայլով:

Յառաջ է վազում բաղցը շշուկով,

Դաշտեր, արօտներ և մարդեր մտնում

Աւ բշրջալով, վեր-վար ոստնելով՝

Դարձան կենսատու գալուստն աւետում:


ԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

43. Արտագրեցէք և ժամանակ ցոյց տուող պարագայական բառերի տակ գիծ քաշեցէք:

Չմեռն (Ե՞րբ) սպիտակ ծիւնը ծածկում է երկրի երեսը: Դիշերները (Ե՞րբ) մարդիկ հանգստանում են ցերեկուայ աշխատանքից: Օրը տեսում է (ո՞րքան ժամանակ) բանեւչորս ժամ: Ամսոն (Ե՞րբ) առաւօտից մինչեւ երեկոյ (ո՞ր ժամանակից մինչեւ Ե՞րբ) գիղացիք աշխատում են դաշտում:

44. Գրեցէք հինգ նախագասութիւն տեղ ցոյց տուող պարագայական բառերով: Ստորոգեալի և պարագայական բառի մէջ ուր, ուրան ուրտեղից հարցերն աւելացրէք:

45. Գրեցէք հինգ նախագասութիւն ժամանակ ցոյց տուող պարագայական բառերով: Ստորոգեալի և պարագայական բառի մէջ երբ, ուրան ժամանակ, ուր ժամանակից մինչեւ երբ հարցերն աւելացրէք:



57. ԶՐԻ ՃԵՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Զուրն, ում ասես, որ հարկաւոր շինի: Բոլորին, զավաներին, թոշուններին և մարդկանց հարկաւոր է նա: Ահա թէ ինչու Աստուած ծովիրն ու ովկիանոսները լցրել է շրով:

Բայց ծովիրի շուրն աղի է և զառն: Այդ վնաս չունի, որովհետեւ ամենը ծովի մօտ չեն բնակւում: Սակայն ինչպէս մարդենք չուրը: Ի՞նչպէս տանենք նրան ծովիրից հազարաւոր մղոն հեռու: Ի՞նչպէս բարձրացնենք նրան սարերի զլուխը:

Աստուած այս գործն յանձնել է աշխատասէր արեին: Իւր տար ճաւագայթներով արեր ջուրը թեթև գործը է զարձնում, զոլորշներն իրանց աղային մասերը թողնում են ծովերում, իսկ իրանք վերև են բարձրանում և թանձրանալով՝ արծաթափայլ ամպերի ձևով երեսում են կապոյտ երկնակամարի վրայ:

Բ.

Սակայն ամպերը չեն կանգնում, մուռմ աւզպակի ծովերի վրայ: Այստեղ քամին սկսում է իւր գործը և ահազին ամպերը թեթև վիետուրի նման բշում է զէպի լոյս աշխարհի ամենայն կողմերը: Ամեն մի ամպի մէջ այնքան ջուր կայ, որ եթէ նա միանգամից ցած թափուէր, կըծածկէր քաղաքներ, վիւզեր, մարզկանց ու կենդանիներին: Բայց Աստուած գործն ուրիշ տեսակ է կարգադրել, ամպերից կաթիկաթում են անձրկի մանր կաթիլները, ինչպէս ալիւրը մաղի միջից, կամ սառչում ու թափում են, ինչպէս ձիւն:

Գ.

Զուրը թարմացնում է հովիտներն ու արտերը և հողը նրան իւր ներսն է ծծում: Գետնի մէջ կաթիլները միմեանց յիտեից հաւաքւում և կազմում են ստորերկրեայ փորբիկ տուններ. միքանի այնպիսի տուն խառնւում են միմեանց հետ և, մի ճանապարհ զանելով, զուրս են զգիտում երկրի երեսը սառն աղբիւրի ձևով: Հոսում է աղբիւրը և առուակ կազմելով, տուած է խազում: Սուակն էլ իրան համար ճանապարհ է պատրաստում—փորը տափորը հողը բանդում է և սկսում է բարերի վրայ խոխոցների տուած զնալ: Ճանապարհին նա պատահում է իւր նման մի շատախօսի և նրա հետ ձեռք-ձեռքի տուած՝ տուած է խազում: Ճանապարհին նրանց զարձեալ պատահում է երրորդը, չորրորդը, հինգերորդը... Սրանք ըոլորը խառնւում են միմեանց հետ և բարեկամարար առաջ են հոսում: Նայում—տեսնում են, որ ահա այս եղբայրական միտթիւնից մի կանոնաւոր զետակ է կազմուել: Այս զետակը չուր է տալիս մարզկանց, կենդանիներին, թարմացնում, զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերը, պարտացնում է ջրաղացների բարերը, կրում է իւր վրայ լաստեր և թե-


թե նաւակներ. իսկ նրա ջրերի մէջ խաղում են ուրախ ձկները՝ փայլեցնելով իրանց արծաթափայլ թեփուկները:

Դ.

Գետակը վագում, խառնուում է ուրիշ զետակի հետ և միասին առաջ են գնում: Ճանապարհին նրանց պատահում է երրորդը, չորրորդը... և այսպիսով կազմում է մի ահազին գետ, որն ունենում է բազմաթիւ վտակներ և անցնում է մի թագաւորութիւնից միւսը. երբեմ միւնոյն գետն անցնում է շատ մանը տէրութիւնների միջով և նրանց ամենքին էլ բաշխում է իւր առաս ջրից. Լոգում են զետի վրայ ծանր նաւեր, որոնք բարձած են լինում զանազան ապրանքներով, անցուզարձ են անում շոգենաւեր. իսկ ափերին շինում են արհեստագործական զիւղեր ու քաղաքներ՝ մէկը միւսից հարուստ: Գետը մեծամեծ հարստութիւններ է տանում երկրից-երկիր կամ դէպի հեռաւոր ծովեր և իւր բերանով ոչ միայն փոքրիկ նաւակներ, այլև մեծամեծ առագաստանաւեր և շոգենաւեր է ծովը մացնում:

Գետերից շատ ջուր է թափում ծովերի մէջ, բայց արեգակն էլ հանգիստ չի մնում. նա առատ զոլորշի է բարձրացնում, ամպեր կազմում և ամրագլ աշխարհին անձրի է բաժանում:

Գետերը դարերով թափում են, թափում ծովերի մէջ, բայց նրանց չեն լցնում. արևն էլ յաւիտեան զօլորշի է բարձրացնում ծովերից, բայց դարձեալ նրանց չի ցամաքեցնում: Այսպէս ամենիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս բանը:



58. Աղբակի Ի Բ

Աղբիւր, զու հոսիր, վագիր, կարկաչիր,  
Զուր տուր արտերին, պարտէզը ջրիր,

ծարաւ ծաղիկներ քնզ են սպասում,  
Սիրոյդ կարօտով այրում, պապակում:

Առանց ըեղ, աղբիւր, աշխարհ չի լինի.

Առանց աղբիւրի ինչ կեանը կըլինի.

Գու ես կեանը տալիս թառամած վարդին,  
Գու ես զովացնում ծարաւը մարդին:

Ով աղբիւրի պէս նախանձ չի պահում,

Ում հոգին այնպէս պայծառ է փայլում,

Ով է նրա պէս միշտ ներողամիտ,

Ում միտրն է այնպէս պայծառ ու վճիտ:

Չարերը նրա մէջ քարեր են զցում,

Նրա յատակը խառնում, պղտորում,

Բայց նա թշնամուն կըկին ներում է,

Նրա ծարաւն էլ զովացնում է:

Երանի կրտամ ես այն մանուկին,

Որ աղբիւրի պէս մարքէ իւր հոգին,

Նրա պէս պայծառ պահէ իւր սիրուր,

Նրա պէս մարուր պահէ իւր անձը:

## 59. Օ Գ Ե Ւ Ք Ա Մ Ի

Օդը մենք չենք տեսնում և ոչ էլ լսում ենք նրա ձայնը, քանի հանգարա է: Մակայն նա մեզ մօտ է և ամեն կողմից շրջապատում է մեզ: Փորձի համար՝ եթէ մենք վաղենք, իսկոյն կըզգանք, թէ ինչպէս է օդը խփում մեր երեսին և կըբանք նրա շվոցը: Առանց օդի մենք մի լուզէ էլ չենք կարող ապրել, որովհետև նրանով ենք շունչ քաշում:

Երբ ձմեռը բաց ենք անում սենեակի զուռը, իսկոյն դրսի ցուրտ օդը ցածից սկսում է ներս վազել, իսկ սենեակի տաք օդը բարձրից դուրս է զնում: Փորձի համար վեր տոէք մի վառած մոմ, բոնեցէք դում մէջ և զուր կընկատէք այդ: Մոմը ցած

բռնելիս՝ կրակի բոցը դառնում է դէպի ներս, իսկ երբ բարձրացնէք — դէպի գուրս: Այս նրանից է, որ ցուրտ օղը ծանը է և այդ պատճառով էլ միշտ ներքնն է լինում, իսկ տարացած օղն, ընդհակառակը, թիթի է և փեր է բարձրանում:

Դուք լաւ զիտէք, որ բամին երբեմ մի կողմ է փշում, երբեմն — միւս: Դա էլ օդն է, որ շարժւում է, մի տեղից միւսն է վազում: Իսկ ինչից է առաջ զալիս բամին: — Երբ երկրի մի որևէ տեղում օղը շատ է տարանում արեգակից, իսկ միւսում ըիշ, իսկոյն վիրեկից տարացած օդն է սկսում զազել դէպի ցուրտ կողմիրը, իսկ ներքեկից սառը — դէպի հակառակ կողմը՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ լինում է տաք սինհակի դուռը բանալիս:

### Գ Է Ւ Ա Ր Պ Ա Ր Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

46. Հետեւալ նախադասութիւնների մէջ հարցերին համապատասխան որոշիչ (յատկացուցիչ), լրացուցիչ և պարագայական բառեր աւելացրէք:

Վայրենի այծն արածում էր (ո՞րտեղ)...., ես (ե՞սք).... կը-  
զամ (ո՞ւր): .... (ի՞նչպիսի) մանուկները արժանի են (ի՞նչի): ....  
(ե՞սք) մեզ մօտ հիւրեօ կըլինին: Քոյքս (ե՞սք).... (ո՞րտեղ) ....  
զնեց մի (ի՞նչ) .... Մեր դպրոցում՝ պարապմունեները տեսում են  
(ո՞ր ժամանակից մինչեւ ե՞սք) ...., ծիծենակները (ե՞սք).... հի-  
նանում են (դէպի ո՞ւր) ....

47. Հետեւալ նախադասութիւններից արտագրեցէք ստորոտիկաների ու  
դորձողութեան կերպը ցոյց տուող պարագայական բառերը իրանց հարցերով:

Աշխատասէր աշակերտը միշտ իր դասերը լաւ (ի՞նչպէս) է  
պատրաստում: Երտանողը բարձր ձայնով (ի՞նչպէս) գիրք է կար-  
դում: Ռատոցիշը խիստ կերպով (ի՞նչպէս) պատժում է ծոյլ  
աշակերտին: Ասուած ամենախիստ կերպով (ի՞նչ կերպով) է կար-  
գադրել ամեն բան: Խելօք երեխան ոշադրութեամբ (ի՞նչպէս)  
լում է մեծերի երատները:

Օքինակ: — Պատրաստում է (ի՞նչպէս) լաւ:

### 60. Բ Ա Ր Ի Գ Ո Ր Ծ

Սարի լանջում, ժայռի տակ,  
Զուը էր բղխում սառնորակ  
եւ ցրուելով խոտերում,  
իզուը ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
ըինեց հովիւն ու տարաւ,  
Խաղ ասելով նա սնուշ,  
Զրից հօար իւր ծարաւ:

Ապա թէ իւր օրհնանըը  
Մաղթեց մարզը այն բարի.  
— Քո շինողիդ օր-կեանըը  
Զրի նման երկարի:

### 61. Ք Ա Մ Ի Ն Ե Ր Ե Ւ Ա Ր Ե Կ

Մի անգամ արեգակն ու հիսխային գօրեղ բամին վէճ բաց  
արին, թէ իրանցից ո՞րն է ուժեղ: Երկար վիճելուց յետոյ, նրանք  
վերջապէս վճռեցին իրանց ոյժը փորձել այն ճանապարհորդի  
վրայ, որը նոյն ժամին ձիով անցնում էր մօտից: — «Նայիր, թէ  
ինչպէս կըյարձակուեմ նրա վրա! — ասաց բամին, — և մի ակնթար-  
թում կըյսիմ նրա վերաբկուն»: — Այս ասաց թէ չէ, սկսեց վշել՝  
որքան յոյժը կարում էր. բայց որքան շատ էր աշխատում բա-  
մին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վե-  
րաբկուի մէջ և աւելի շտապով շարունակում իւր ճանապարհը:  
Քամին բարկացաւ, կատաղեցաւ և ամձրի ու ձիւն թափեց ճա-  
նապարհորդի վրայ: Անիծելով բամուն՝ նա վերաբկուի թեերը  
հագաւ, վրայից էլ գոտին կապեց: Նոր հասկացաւ բամին, որ  
էլ չի կարող նրա վերաբկուն խիել: Տեսնելով իւր հակառակորդի  
անզօրութիւնը, արեղակը ժպտաց, գուրս նայեց ամպերի յետնից,  
տարացրեց երկիրը, գրա հետ էլ մեր խեղճ, ստոած ճանապար-

հորդին: Արեգակի ճառաղայթներից տարացում՝ նա սիրու առաւ,  
օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին:

—Տեսնում ես,—ասաց այն ժամանակ հեղիկ արեր բարկաց-  
կոտ քամոն.—քաղցրութեամբ ու բարութեամբ աւելի բան կա-  
րելի է անել, բանթէ բարկութեամբ:

## 62. Ա Ր Ե Ւ

Արե՛, արե՛, զու մեզանից  
երբ հեռացար զէպ հարաւ,  
Զմեռն եկաւ և ամեն ինչ  
Յափշտակեց ու տարաւ:

Հասոււած սիրես, էլ մի զնար,  
Մեզ մի թողնիր քեզ կարօտ,  
Քեզ կրպատուենր, քեզ կրպովենր  
Միշտ—իրիկուն, առաւօտ:

Որբան զոհ ենր, որ զու բերիր  
Գարնան անուշ եղանակ.  
Ա՛խ, երանի զարուն լինի  
Տարին բոլոր ժամանակ:

Տես, թէ ինչպէս վիթթել են  
ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
Տես, թէ ինչպէս տարածուել է  
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են զովում թոշնիկները  
Իրանց բաղցը զայլայլով,  
Հովին իւր մեզմ սրինգով,  
Հոտազն անուշ հոլոլով:

2է, արե ջան, էլ ջզնաս,  
էլ շթողնես մեզ կարօտ.  
Գնա, ընիր զիշերները,  
Առաւօտը եկ մեզ մօտ:

## 63. Կ Ր Ա Կ

Սիմէօնը զնաց դաշտը: Ջատ ցուրա էր և անձրե էր զալիս.  
Նա զողզողում էր ամբողջ մարմնով: Սիմէօնը մտաւ անտառը,  
չոր ցախ հաւարեց, զրպանից հանեց լուցկին և կրակ արաւ:  
Եյստեղ նա տարացաւ, շորերը չորացրեց և հետը վերցրած հացը  
կերաւ, կշտացաւ:

Կրակի առաջ նստած՝ Սիմէօնը մտածում էր.

—Ի՞նչ լաւ բան է կրակը, առանց նրան ոչ կերակուր կարելի  
է եփել, ոչ տարանալ: Տես, թէ որբան զործ է շինւում զարբնա-  
նոցում և զործարաններում: Եթէ կրակը ամինէր, մինը երկաթից

ինչպէս պէտք է պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ  
շինէինք: Ճշմարիտ է, թէս երբեմն մենք կրակից վնաս ենք  
ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր յիմար ան-  
հոգութիւնից է պատահում:

## Գ Ր Ա Խ Ո Բ Վ Ա Բ Ժ Ո Ւ Թ Ւ Խ Ն Ե Բ

48. Լուծեցէք հետեւեալ նախագասութիւնները:

Բարի Սիմէօնն երէկ դաշտն էր զնացել: Արամն այսօր ան-  
տափից չոր ցախներ սերեց: Մեր ուսուցիչը դասի ժամանակ ման-  
րամասնաքար պատմեց երկրի մասին:

Օրինակ— Բարի Սիմէօնն երէկ դաշտն էր զնացել—սա մի  
ընդարձակ նախադասութիւն է: Ո՞վ էր զնացել: Սիմէօնը—ենթա-  
կայ է: Սիմէօնը ի՞նչ էր արել: Գնացել էր—ստորոգեալ է, եւայլ:

49. Արտագրեք և զործողութեան պատճառն ու նպատակը  
ցոյց տուող պարագայական բառերի տակ գիծ քաշեցէք:

Զինը հալում է (ինչի՞ց) տաքութիւնից: Մոմը հալում  
է (ինչի՞ց) կրակից: Բերանս պապակում է (ինչի՞ց) ծարաւից:  
Գրքերը տպում են (ինչո՞ւ համար) կարդալու համար: Ես այսօր  
տանից դուքս շեկայ (ի՞նչ պատճառով) հիւանդութեան պատճա-  
ռով: Ես կարմրեցայ (ինչի՞ց) ամօթից: Շատ քաղաքներ ամայի  
են դառնում (ինչի՞ց) ժանտախտից:

50. Լրացրեք հետեւեալ նախագասութիւնները:

Հօրեղբայրը վերադարձաւ: —Ո՞մ հօրեղբայրը: Ե՞րբ: Ո՞րտե-  
ղից: Ի՞նչո՞վ: Ի՞նչո՞ւ համար:

Շունը խաղում է: —Ի՞նչպիսի շունը: Ի՞նչպէս: Ո՞րտեղ: Ո՞մ հետ:

51. Լուծեցէք ձեր կազմած նախագասութիւնները:

### 64. ԳԱՐԲԻՆ

Կոսնը ձեռքին, զնդանն առաջին,  
Քիթ, երես մրուտ, գարբնոցի միջին  
Կաշուէ զողնոցը առաջը կապած՝  
Լոփի կանդնած է մեր Խաչօ գարբին:

Փուրսը փուհ-հա-փուհ փշում է, փշում,  
Կայծեր ու մոխիր զէստպէն փուստ,  
Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝  
Սաստիկ տարիցը վառւում, կարմրում:

Խաչօն հանում է երկաթի շերտը,  
Զնդանի վրայ կրանով ծեծում,  
Ջինում նբանից պայտ, մեխ ու կացին  
Եւ իսկոյն շրի տաշտակը կոխում:

Թբշտում է երկաթը ցուրտ շրի միջին,  
Ամպի պէս վուստ տար-տար զոլորշին,  
Կրկին պնդանում, կրկին փափկանում,  
Մինչեւ պատրաստաւած շպրտում գետնին:

Եյսպէս ամբողջ օք մեր զարբին Խաչօն՝  
Կրակի առաջ, այն կեզու ու մուրում,  
Մի կտոր չոր հաց ճարելու համար,  
Կուշ-ձիգ անհլով իւր կհանը է մաշում:

### 65. ԵՐԿՈՒԻ ԽՈՓ

Մինոյն երկաթի կտորից և մինոյն արհեստանոցում շինուած էին երկու խոփ: Դրանցից մէկը զնեց մի երկրագործ և սկսեց գործածել նրան, իսկ միւսը երկար ժամանակ բոլորովին ահօգուտ ընկած էր վաճառականի խանութում: Պատահեցաւ, որ միքանի ժամանակից յիտոյ երկու ընկերները դարձեալ տեսան իրար: Երկրագործի մօտ եղած խոփն արծաթի պէս պըս-

պղում էր և առաջուանից աւելի զեղեցկացել էր, իսկ միւսը սկսել էր ու ժանդոտել:

— Ասա, խնդրեմ, — հարցրեց ժանդոտած խոփը իւր ընկերին: — այդ ինչիցն է, որ զու այդպէս փայլում ես, իսկ ես այսպէս սկսել եմ ու ժանդոտել:

— Աշխատելուց, սիրելիս, — պատասխանից միւսը: — իսկ զու որ ժանդոտել և առաջուանից աւելի վատացել ես, այդ էլ նրանից է, որ այսրան ժամանակ կողքիդ ընկած՝ ոչինչ չես արել:

### 66. ԵՐԿՈՒԻ ՔՈՅՑ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգով գեռ արի, զլխով ալեոր.  
Միծ ծով էր պատել նրա աշխարհը.  
«Ասկի» ասացին զիտոնը այն զարը:

Ունէր նա երկու մատաղնառ աղջիկ,  
Մինը խիստ տգեղ, միւսը զեղեցիկ.  
Մի օր տգեղը տսում է միւսին.  
«Երթանը ծովի ափ, քոյրիկ, միասին:

Օիրունը զնաց առաջից տրտում,  
Տզեղը յետնից ոխ պահած սրտում.  
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,  
Իւր սիրուն ըրոջ զորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը չըից.  
— Քոյրիկ, ին քոյրիկ, փրկէ ինձ մահից.  
«Ես ունիմ տանը զեղեցիկ մանեակ,  
«Առ, էն քեզ լինի, պարզեէ ինձ կեսնը»:

— Էն առանց քեզ էլ կարսկ եմ ստանալ.  
Ինձնից փրկութիւն զու ընաւ մի յուսալ:  
— Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւտկան,  
Կըտամ քեզ ոսկի պսակ պատուական»:

— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսար»:

— Քոյթիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,  
Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ»:  
Տգեղի սիրտը դառել էր ժեռ բար,  
Քրոջ խնդիրը թողեց անկատար»:

Հկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,  
Բռնեց մարմինը սիրուն աղջկան.  
Ջրիցը հանեց, զրեց ափի մօտ,  
Ճատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ»:

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,  
Լացեց ու առաւ, զրեց ուսի վրան,  
Տարաւ իրա տուն այդ անդին գիւտը,  
Չորսցը նրա մարմնի ողջ հիւթը,  
Գեղեցիկ տափիդ շինեց ոսկրերից,  
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից»:

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,  
Գնաց արքունիք՝ տափիդը ձեռքին»:

Երբ մտաւ գանին շրեղ գարգարած,  
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած.  
Բացեց բերանը, լարերին խփեց,  
Հիւթերի առջև քաղցրաձայն երգեց».

«Հնչէ, իմ տափիդ, հնչէ համարձակ,  
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.  
«Լոէ, իմ ծնող, լոէ, սիրական,  
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.  
«Լոէ, ժողնվորդ, լոէ անխոսվ,  
«Հարազատ քոյրս զլորեց ինձ ծով»:

Միւս օրը գահինք խարոյկ շինեցին,  
Մահապարտ ըրոջ մէջը զլորեցին.  
Հուրը պըլպլաց. աղջիկը կանչեց.  
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

Գ Բ Ե Ւ Բ Ո Բ Վ Ա Ր Փ Ա Խ Թ Ի Խ Ն Ե Բ

52. Հետեւալ նախադասութիւններից արտազրեցէք բոլոր սառողեալ-ները պարագայական բառերի հետ: Սառողեալի և պարագայական բառերի մէջ հարցեր աւելացրէք:

Մանուկները սովորում են ուսումնարանում: Դարնանը տաք երկներից երգող թուշունները վերադասում են իրանց ըները: Դարնանից մինչեւ աշուն գիւղացիք դաշտային աշխատանքով են ուղարակում: Աքաղաղները առաւտոններն ու երեկոնները բարձրածայն կանչում են:

Օ ր ին ակ, -- Սովորում են (ո՞ւտեղ) ուսումնարանում:

53. Գրեցէք ձեղանից հինգ ընդարձակ նախադասութիւն լրացուցիչ, որոշիչ, յատկացուցիչ և պարագայական բառերով:

54. Արտազրեցէք հետեւալ նախադասութիւնները և կոչական բառերի տակ զիծ քաշեցէք:

Եղթանք ծովի ափ, քոյրելի, միասին: Քոյթիկ, մի թողնիլ կու ինձ անտէրունչ: Հնչէ, իմ տափիդ, հնչէ համարձակ: Լոէ, իմ ծնող, լոէ, սիրական, հարազատ քոյրս խլեց իմ փեսան: Լոէ, ժողնվորդ, լոէ անխոսվ, հարազատ քոյրս զլորեց ինձ ծով:

## ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

67. ԶԻՒՆ


— Ալս, ինչու, ինչու կըզայ պաղ ձիմնը,  
Նորից ամիսներ պիտ' մտամ տանը,  
Տեսնելու չեմ ևս կանաչ ծառ, արօտ,  
Հոտոտ ծաղիկին պիտ' մտամ կարօտ:

— Չինը որ կըզայ երկնքէն ի վար,  
Իմացիր—մեծ բաղդ է մարդուս համար.  
Վերմակի պէս տաք կըծածկէ զետին,  
Որ բոյսի արմատն զիմանայ ցըտին:

Նա հողին կըտայ հիւթ, պարարտութիւն,  
Դաշտին ու արտին մեծ տուառութիւն.  
Մի տրտնջալ, մարդ, զու բնութենէն.  
Թէ տաք և թէ ցուրտ մեզ միշտ օգուտ են:

68. ԶՄԵՐԸ

Զմեռն արեզակը երկար չի մտւմ երկնակամարի վրայ և շատ  
ըիշ էլ տաքացնում է, այդ պատճառով ձմրան օրերը կարճ են  
վնում և ցուրտ. Մարդիկ վառում են վառարանները, որ իրանց  
բնակարանները տաքացնեն, իսկ տանից զուրս զալիս՝ տաք հա-



զուստներ են հագնում: Գետինը ծածկում է ձինով, իսկ գետերը, առուակներն ու լճերը—սառոյցով: Գետերի սառոյցը երբեմ այնքան հասու է լինում, որ նրա վրայով անցուղարձ են անում մարդիկ և սահնակներ: Ծառերն ու թփերը մերկացած են լինում իրանց տերեններից, թռչուններից շատերը հեռանում, գնում են տար երկիրներ, դապանները բաշում են իրանց բները, իսկ միջատների հոտը կորում է բոլորովին:

## 69. ԶՄԵՐ

Հմրան երկիւղից գետը բար կտրեց,  
Քըշքան առուն լոեց, պապանձուեց,  
Գալսր բոյսերը սառան, վետացան,  
Նախշուն հաւերը թռան, հեռացան.  
Բայց էլի շատին խը ճանկը զցեց,  
Բուք-բուրան արսու, բոլորին խեղղեց.  
Սիրուն վարդենու թռվը չորցըց,  
Սոխակի լեզուն տակիցը կտրեց...  
Ջրաղաց չկայ—ջուրը սառել է,  
Ճանապարհ չկայ—ձիմը կապել է.  
Թէ մարդ, թէ տաւար, միակերպ բաղցած՝  
Ողբում, լալիս են մահուան գուռն ընկած:

## 71. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԶՄԵՐ ԺԱՄԱՆԱԿ

Հմեռը զալիս է թէ չէ, զաշտերն ու անտառները զատարելում, մերկ անապատի կերպարանը են ընդունում: Գեղեցիկ երգող թռչունները թողնում են իրանց բները և հեռանում գէպի տար երկներ, զրկելով մեզ իրանց բաղցը երգերից: Մեզ հետ ձմերելու են մոռում միայն ազուանները, կաշաղակներն ու ճնճղուկները, բայց նրանք էլ մօտենում են մարդկանց բնակարաններին:

Գազմնները թէկ չեն փախչում ձմեռուայ երեսից, սակայն նրանք բաշում-մտնում են իրանց որչերն ու բները: Արջը և

ողնին սաստիկ ցրտից թմրում, ննջում են մինչև զարնան սկիզբը: Խորամանկ աղուէսը և բաղցած զայլը զէսուղէն են ընկնում մի բան ճանկելու համար, իսկ մոխրագոյն նապաստակը ցատկուելով է տարանում:

Ընտանի կենդանիներն, իհարկէ, ցրտից և բաղցից կրկոտորւէին ձմեռը, եթէ մարդիկ նրանց համար տար գոմեր և յարմար կերակուր չպատրաստէին, նրանց հոգսը չբաշէին:

## ԳՐԱԿԱՐԱԳՐԻ ԹԻՒՐՆԵՐ

55. Գրեցէք հետեւալ գործողութիւն և գրութիւն ցոյց տուղ բառերը(բայ):

Խմել: Հազնել: Կանգնել: Գնալ: Մնալ: Նստել: Խաղալ: Կարդալ: Գրել: Նսյել: Տեսնել: Ուշանալ: Շտապել: Բարձրանալ: Մոտենալ:

56. Արտագրեցէք «Կենդանիների բնակարանները ձմեռ ժամանակ» յօդուածից բոլոր բայերը:

Օրինակ:—Դալիս է: Դատարկում է....

57. Արտագրեցէք հետեւալ բայերն իրանց սկզբնական ձմով:

Կարդացի—կարդալ: Մնում եմ—մնալ: Կածէ—....: Քննիցի—....: Կանչեցին—....: Պատրաստում ես—....: Կըքաշեմ—....: Ստիպում են—....: Կերայ—....: Կերակըր—....: Ընկնում էր—....: Թուշկուցին—....: Լուսացու—....: Օքնեց—....: Անցնում էր—....: Կըթմրի—....:

## 71. ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Հմեռը բոլորն էլ տար և կուշտ չեն լինում: Գիւղերում և բաղարներում շատ աղքատներ կան, որոնք ոչ տար բնակարան ունին և ոչ էլ ուտելու չոր հացի կտոր: Ցուրտն ու բաղցածութիւնն ստիպում են աղքատին գուրս զալ տանից: Թափառում է թշուառ ծերունին փողոցից-փողոց, տանից-տուն՝ Քրիստոսի սիրուն մի կտոր հաց մուրալու: Խեղճը չունի տար հագուստ,

Նրա վերաբերմ պատառուստած է, տրեխները ծակծկուած։  
Ցուրտն անխնայ անցնում է մինչև նրա ոսկորները, ձայնը դող-  
գողում է, աշքերից արտասուրի կաթիլներ են գլորւում, ձեռ-  
ներն ու ոտները ցրտից սառել, փետացել են... Ողորմեցէր այդ  
թշուառին։ Թոյլ մի տաք, որ նա այդ ձեր հասակում մեռնի  
սովատանց մահով։ Տարացրէր, կերակրեցէր, ողորմութիւն տուէր  
նրան և նա միշտ կօրհնէ ձեզ՝ ձեր բարերարութեան համար։

### 72. ԹՌ Ռ Զ Ո Ւ Խ

Մի ձմբան օր էր. փշում էր քամին,  
Չինի ըուլէրը ամեն տեղ ծածկում.  
Մարդ և անասուն ցրտի երեսից  
Փախչում էր, մտնում, տան մէջը փակւում։

Իմ պատուհանին, որ պինդ փակուած էր,  
Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.  
Նա գողգողում էր, թեները շարժում  
Եւ իւր կտուցով խփում ապակուն։

Տեսնելով թռչնի այս գառն վիճակ,  
Ցուզուեց իմ սիրտը, զթացի վրան.  
Հթողի երկար տանջուել այն ցրտում,  
Իսկոյն սենեակս առայ ևս նրան։

Դադարեց ձիւնը, հանդարտուեց բամին,  
Իմ սիրուն թռչնակը նորից ոյժ առաւ.  
Ուղղեց թեները, սաւառնեց օգում  
Եւ մի բաղցը երգ երգել սկսաւ։

Անուշ էր երզը, մեղմ ու գրաւիչ.  
Նա շարժեց իմ սիրտ, ազդեց իմ հոգուն.  
Բոնեցի նրան զրի վանդակում,  
Որ զոհ չգնայ կատաղի քամուն։

Բայց մի ժամ շանցած, նա տիսուր-տրառում  
Գլուխը կախեց, արձակեց մի ճիշ.

Մօտեցայ նրան, նա յետ-յետ քաշուեց,  
Կասես՝ ևս նրան լինէի դահիճ։

— Այս, դժուար է,—ասացի նրան,—  
«Անսման երգիշ, սիրելի թռչնակ,  
«Ծնկերից զատուած, բռ բնից հեռու  
«Վարել բեղ այսպէս բանդարկեալի կեանք։

Ահա կըբանամ բռ բանդի դուռը,  
«Թոյիր զէպի դաշտ և կամ խոր անտառ,  
«Գտիր ընկերիդ, սիրէ բռ բունը.  
«Մահ ու գերութիւն մի է բեղ համար»։

### 73. ԳԱՐՆԱՆ ՍԿԶԲԻՆ

Հրաշալի եղանակ է այսօր։ Գուրսը տաք է և պարզ. արե-  
գակն ուրախ-զուարթ խաղում է հալած ձեան հետ, ջրի կաթիլ-  
ները պսպղում են նրա ճառագայթների տակ. խոնաւ գետնի  
երեսից գոլորշի է բարձրանում։ Փոքրիկ ճնճղուկները գժուածի  
նման աղմկում են կտուրի վրայ... Ահա այնտեղ թռչկոտում է  
նրանցից մէկը. նա աղաղակում է,—նրա ձայնի ամեն մի հնչիւ-  
նը, նրա փոքրիկ մարմնի ամեն մի անզամն առողջութիւն և ոյժ  
է արտաշնչում։

### 74. ՀՐԱԽԻԷՐ ԳԱՐՆԱՆ

Կարօտ ենք տեսքիդ, անսման զարուն,  
Ճուտ արի, մեզի բեր ծաղիկ սիրուն.

Բեր պայծառ արկ, բեր մեզ տաք օրեր,  
Ճըռվրոող թռչուն, բեր կանաչ դաշտեր։

Բաց մեր գաները, բաց մեր պատուհան,  
Թող բացուեն, ծաղկեն վարդ, մեխակ, շուշան,  
Փակուած սենեակից ելնենք, աղատուենք,  
Կանաչ դաշտ երթանը, խաղանը, գլորուենք։

### ԳՐԱԿԱՆ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

58. Արտազրեցէք «Գ ա ր ու ն» յօդուածից բոլոր բայերը:  
 59. Քրեցէք նոյն բառերը իրանց սկզբնական ձևով:  
 60. Արտազրեցէք հետեւեալ վարժութիւնը:

Ն Ե Բ Հ Ա Յ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

(Ա Յ Ժ Ա Բ)


- Եղ. թ. Ես կարդում եմ:      Եղ. թ. Մենք կարդում ենք:  
 Դու կարդում ես:      Դուք կարդում էք:  
 Նա կարդում է:      Նրանք կարդում են:  
 61. Քրեցէք միենոյն ձեռվ գրել, կանգնել և խօսել բայերը:

### 75. Գ Ա Բ Ն Ա Ն Բ

Մարտի իննին ցերեկն ու դիշերը իրար հաւասար են լինում, իսկ յետոյ հետզհտէ ցերեկն սկսում է երկարիլ, դիշերը կարձանալ: Չիւնն ու սատոյցը հալում են արեգակի ներգործութիւնից. զետերը լցում, բարձրանում են և, զուրս զալով ափերից, չորս կողմք ջրով ծածկում են: Դաշտերում և մարգագետիններում, անտառներում և պարտէզներում կանաչ խոտն է սկսում զուրս զալ և զլուխ են բարձրացնում զարնան առաջին ծաղիկները—ձնձաղիկն ու մանուշակը: Թռչունները խումբ-խումբ վերադառնում են հեռու երկրներից, արտեղ-այնտեղ սկսում են երեալ և միջատները: Հովիւը իւր հօար զուրս է տանում դէպի արօտ: Դարնան զալով սկսում է և զիւզացու զաշտային. աշխատանքը: Նա պէտք է արտերը վարէ, ցանէ, որ իւր զատարկուած ամբարներն աշնանը նորից լցնէ հացահատիկներով:

### 76. ՀԱՍՈՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արե,  
 Տաք և պայծառ է օքը.  
 Դէհ, բաշեցէք, սիրուն եղներ,  
 Ցառաջ տարէք արօրը:



Վարը վարենք, ակոս փորենք,  
Խոր ակօսներ հողի մէջ.  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Ցորեն դիղենք կալի մէջ:  
Կըզայ ձմեռ,—մենք վախ չունինք, —  
Ուրախ կանցնի մեր օրը.  
Ուտելու միշտ պաշար ունինք,  
Լի և կուշտ է մեր փորը:  
Դէհ, բաշեցէք, սիրուն եղներ,  
Չուտով վարենք արտերը.  
Թող շասեն մեր զբացիրը՝  
«Ճոյլ են չասօյի եղները»:



## 77. ԱՊՐԻԼ

Մեր Եգամ նախահայրն իւր կեանքում առաջին անգամ տեսած ձմեռուայ ցրտիցն ապատուեց. գարունքուայ կարմրաշաղ արեից նրա մրսած մարմինը տարացաւ. նրա կեանքի անբաժան ընկերը, մեր եւա տատը, մի փունջ ծաղիկ ձեռքին՝ ուրախ ուրախ տուն ընկաւ. Կարծես մի ծանր բեռ վեր ընկաւ. Ազամի սրտից. ծաղիկը ձեռիցն առաւ, հոտ բաշեց, Աստծուն փառը տունց ու ասաց. — «Թող այսօրուանից սկսած այս ամսի անունը Ապրիլ կոչուի. ես փախենում էի, թէ ձմեռը մի օր մեզ ցրտահար կանի, կըսառեցնի, կըմեռցնի. բայց հիմի հաւատում եմ, որ այսուհետև մենք ցրտից երկիւդ չունինք, կապրենք ու կեանք կըրաշենք»:

Ապրիլ, իրաւ որ ապրիլ. Ե՞նչ դրութեան էին միքանի օր առաջ շրաւորները, ինչպէս են այսօր՝ Ապրիլ ամսին. Նրանք աշումքուան դառը ըրտինքով ձեռք բերած ապրուատի պաշարը ձմեռուայ սկզբին կերել-վերջացըել էին:

Հայը թուրքին, թուրքը հային պատահելիս՝ յունուարին հարցնում էին՝ «ալիւր ունիս», փետրուարին հարցնում էին՝ «փայտ ունիս», մարտին էլ իրար սիրտ էին տալիս, որ քաջ լինին, միքանի օր էլ համրեցն:

Գնացին, կորան ձմեռուան ձիւնն ու սառոցը, ցուրտ ու սառնամանիրը. Անց կացաւ զիժ Մարտը, անց կացան բուրն ու բամիրը, եկաւ Արտիլը, ապրեցը ամենքին:

Կատարեալ ապրելու ամիս է. կաշտը լիբն է տեսակ-տեսակ բանջարներով. փողով չէ, զնում են, քաղում, լերում, ուտում. Ոշխացը ծնել է. գառները զմակները խաղացնելով խոտերի մէջ թռչկոտում են. կաթը ջրից առատ է. ոշխարի մածունն ազքատից խնայել չկայ, հարուատն իւր չունեռը հարևանին կաթնով, մածնով, նոր պանրով, կարաղով լիացնում է:

Աշնանավար ցորենի արտը երկու թիվ բարձրացել, ցնծալով ցնծին է տալիս. նրա կողքին Մարտ ամսումը վարած ու ցանած գարնանավար արտը նոր ծլել է. մտիկ տուողի հողին է վառաւորուում: Ծառերն արգէն ծաղկել են, անուշահոտութիւն են բուրում: Ծառերի վրայ ծաղկից-ծաղիկ ուկեզոյն մեզուներն են թռչկոտում. ամեն մի ծաղկի վրայ մի-մի աշխատասէր մեզրանին է նստել. նա ծաղիկների բաղցը հիմից մեզ համար մեղը է շինում: Ձմեռուայ ցրտից փախած թռչուններն օտարութիւնից յետ են եկել: Դրանցից միքանիսը իրանց բներն են շինում, ոմանք ձու ածում, միքանիսն էլ ածել, պրծել, թուխս են նստել:

ԳՐԱԿԱՐԱՎՈՐ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

62. Արտադրեցէք հետեւալ վարժութիւնը:  
Անցեալ ժամանակ

(Առաջ)

Եզ. թ. ես կարդում էի:	Եզ. թ. ես կարդացի:
Դու կարդում էիր:	Դու կարդացիր:
Նա կարդում էր:	Նա կարդաց:
Ցող. թ. Մենք կարդում էինք:	Ցող. թ. Մենք կարդացինք:
Դուք կարդում էիք:	Դուք կարդացիք:
Նրանք կարդում էին:	Նրանք կարդացին:
63. Փոփոխեցէք միենայն ձևով մնայ, խնդաւ և երեաւ բայիրը:	
64. Գրեցէք հետեւալ բայերը ներկայ ժամանակով:	
Մըսեւ, Տեսնել: Քաղեւ:	

78. ՀԱՏԻԿ

Լոյալ բացւում է, շուտ արտք զնամ,  
Պատում սուր խոփով ես կուրծքը հողի.  
Իմ սիրոն հատիկ, բեկ նրան պահ տամ,  
Մինչեւ օքերը ամբան արեի:

Թագեմ բեկ, հատիկ, և զարդս քեկ հետ.  
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,  
Թող զարդս մեննի զետնի տակ անհետ,  
Դու ինձ միտիթար կրկին տուն զարձիր:

Եւ շերմ ազօթքով Տիրամօր առջեն  
Ես մոմ կրվառեմ, ես խունկ կրծխեմ,  
Որ բեկ պարզեէ մի առատ անձրե,  
Որ բեկ միշտ սիրով նայէ ինդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեզերիս համար  
Արժանի շինիմ, ծով կրզարձնեմ  
Ես տաք բրախնըը ճակտիս արեաս,  
Որ բեկ, իմ հատիկ, ծարաւ շթողնեմ:

Ճլիր, կանաչիր, ոսկէ սաւանով  
Ճածկիր իմ արտը ողջ ալէծածան.  
Նոր այն ժամանակ անուշ շշինով  
Տուր ջարդուած սրտիս մի բուն հանդստեան:

79. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԱՌԱԽՈՑՔ

Ի՞նչպէս թարմ և զեղեցիկ է մայխուայ առաւոար: Դաշտե-  
րը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով: Կարծես  
բնութիւնն օրէցօր աւելի բազցըրանում է և զարհանային մէզի  
միջից ժպտում է ամառը:

Երբ ես զիում եմ անտառ, այնտեղ, թփերի ստուերների  
տակ, ծաղկապատ հովիաներում, փուռած եմ տեսնուոմ մայխու-  
այ որպին—սպիտակ և անուշանոտ շուշանը: Ամեն կողմ աշբիդ  
տառաչ կանաչ զորպեր են փուռած, որոնց վրայ առաւոտեան  
ցողը ցանել է իր մարդուրտեայ կաթիւները: Արեի առաջին  
ճառագայթներն, ընկնելով ծառերի տերեներից և խոտերի թեր-  
թիկներից կախուած այդ կաթիւների վրայ, փայլեցնուոմ են նրանց,  
ինչպէս աղամանդեաց ակները: Թուչունները ծըլվլում են չորս  
կողմով, իսկ այնտեղ, վարդի կիսաբաց կոկոններով ծածկուած  
թփերի մէջ, լուսում է սոխակի զմայլելի ձայնը, նա երգում է,  
սպասելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն:

80. Ա Մ Ա Թ

Սահեծողն իւր առաս ձեռքը բաց արեց,  
Արտեր, անտառներ հարստացրեց.  
Ծառերու թփեր զարդով ծածկուեցան,  
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան:  
Ազատ շրջում են հոտերը զաշտում,  
Ազատ լողում են ձկները ծովում.  
Այգում պատուները զեղնիլ սկսան,  
Արտերում հարուստ ցանքսերը հասան:  
Գաշտում գերանդին սկսաւ փալել  
Եւ անտառներում թուչուններն երգել.

«Ի՞նչքան սիրուն է այս ստուերներում.  
«Ե՛կ, հանգստացիք, մանկիկ, հովերում.  
«Ականջ դիք, ինչպէս մենք երդ ենք երգում,  
«Առատ ամառուան փառք փերընծայում»:  
—Ո՞չ թէ ամառուան, առաց, փառք տուէք,  
«Ով ամառ տուեց, նրան օրհնեցէք»:

### 81. Ա Մ Ա Ռ Ը

Ո՞րքան երկար են ամառուայ օրերը և ինչպէս սաստիկ է այրում արեգակը երկնքից: Տօթից և փոշուց քաղաքներում կեանքն անտանելի է, այդ պատճառով բնակիչներից շատերը թողնում, հեռանում են դիւդերն ու ամարանցները՝ մաքուր օդ շնչելու համար: Ամառուայ այս շոգերի ժամանակ շատ անդամ երկինքը ծածկում է թուխ ամպերով, բարձրանում է սաստիկ քամի, փայլատակում է կայծակը, գուզոռում են ամպերը և յորդ անձրև է սկսում տեղալ: Սովորաբար այսպիսի մթրկից յետոյ օդը թարմանում է, ամեն ինչ զուարթանում, ուրախ տեսք է ընդունում:

Ամառը պառւղներն սկսում են հաստնանալ: Անտառներում համնում են հատապուղները, իսկ դաշտերում հացարոյսերն են զեղնում և հնձուորներին իրանց մօտ հրաւիրում: Գիւղացին եռանդով սկսում է հոնձը:

Գ Բ Ա Խ Խ Վ Ա Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

### 66. Արտագրեցէք հետեւալ վարժութիւնը:

Ա պ ա ռ ն ի Ժ ա մ ա ն ա կ

(Յ ե տ ո յ)

Եզ. թ. Ես կըկարդամ:	Եոզ. թ. Մենք կըկարդանք:
Դու կըկարդաս:	Դուք կըկարդաք:
Նա կըկարդայ:	Նրանք կըկարդան:

### 66. Փռփոխեցէք միևնույն ձեռվ լողալ, հտսնել և թռչել բայերը:

### 67. Լրացրեց հետեւալ վարժութիւնը:



Տալ.

Ներկայ ժամանակ

Եղ. թ. Ես տալիս եմ:	Յոդ. թ. Մենք տալիս ենք:
Դու ....	Դուք ....
Նա ....	Նրանք ....

Անցեալ ժամանակ

Եղ. թ. Ես տալիս էի:	Եղ. թ. Ես տուցի:
Դու ....	Դու ....
Նա ....	Նա ....
Յոդ. թ. Մենք տալիս էինք:	Յոդ. թ. Մենք տուցինք:
Դուք ....	Դուք ....
Նրանք ....	Նրանք ....

Ապանի ժամանակ

Եղ. թ. Ես կը տամ:	Յոդ. թ. Մենք կը տամ:
Դու ....	Դուք ....
Նա ....	Նրանք ....

## 82. ԱՆԶՐԵՒԻ ԿԱԹՈՒԼ

Փայլուն կաթիլը գարնան անձրեսի

Մի օր հարց տուեց իւր ընկերներին.

— Ինչո՞ւ մենք այս ճին, աղքատ խրճիթի

Լուսամուտն այսպէս բախում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկոյն տուին պատասխան.

— Այսուհեղ երկրագործ մշակն է ապրում.

«Քաղցր աւետիք տալիս ենք նրան,

«Որ արտում ցորենն աճում է, ծաղկում»:

## 83. ԵՐԱԾ ԵՒ ԱՆԶՐԵՒ

Ամառը չորային էր. Արեգակն օրէցօք բարձրանում էր պարզ  
երկնքի վրայ. Փոշին ամպի պէս կանգնած էր ճանապարհներին:

Շնորհնը բարի նման պնդացել էր և սկսել էր ճաքճրուտել: Առուները  
ցամաքել էին, ծաղիկները տիրութեամբ կախել էին գլուխները,  
խոտը գեղնել էր, դեռահաս ցորենը թառամել էր: Երկրագործը  
վշտալի սրտով նայում էր իւր արտին և մտածում. «Աստուած  
իմ, ինչ որ ինձանից էր կախուած, արեցի, արտա խորը վարեցի,  
ընտիր սերմով սերմեցի և լաւ ցարանեցի,—այժմ թող լինի քո  
սուրբ կամքը»:

Պայծառ երկնքի վրայ ամսկեր երեացին. հետզեհտէ նրանք  
թահճրացան և ծածկեցին երկնակամարը, իսկ երեկոյիան զովա-  
րը անձրեք ջրեց մարգագետիններն ու արտերը: Դաշտային թա-  
ռամած բոյսերը զուարթացան. նրանք անտեսանիլի կերպով  
իրանց բարակ արմատների օգնութեամբ ծծեցին թաց հոգի  
սննդաբար հիւթը: Խոտը կանաչեց, ծաղիկները բարձրացընին  
իրանց զլիսիկները, ծառերի փայլուն տիրեններն ազահաբար ներս  
ծծեցին խոնաւ օդը: Աւրախ-զուարթ տատանուիլ սկսան վար-  
սկի, գարու և ցորենի արտերը և արագ-արագ լցրին իրանց  
բոտալի հասկերի հատիկները:

## 84. ՀՈՒՆ 2

Ահա բանուորներն շարէշար կանգնած,

Գերանդին ձեռքին, գողնոցը կապած,

Մինչև զոտկատեղ բարձրացող արտում

Փափտն երեսին՝ ցորեն են հնձում:

Ընդարձակ դաշտը, որն ամիսուկէս

Մեղմ բամու դիմաց, կապոյտ ծովի պէս,

ձկւում, թերւում էր ու հօրանց զնում,

Նորից յետ զանուում, իւր տեղն էր բոնում,

Այժմ բաց-գեղին սոկու գոյն առած,

Տիրոջ օգնութեամբ հասկերը լցրած,

Արևի դիմաց փայլում է, խազում,

Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում:

Կարծես հրեշտակը տիրոջ հրամանով  
ծիծաղ է սփռել իւր առատ ձեռքով,  
Աւրախ ու բրբիջ, խինդ ու բերկութիւն  
Դաշտը բանած է կասես օրմիրուն:

Ահա բանուորներն շարէշար կանզնած,  
Գերանդին ձեռքին, զողնոցը կապած,  
Հնձում են ցորեն ու խուրձեր կապում,  
Կապած խուրձերից տասնեակներ կազմում:

### 85. ՕՏՄՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆՔ



Եռը բուն էր զերել զիւզացու ար-  
տում և ձագեր հանել: Հնձի ժամա-  
նակ էր: Մի օր արտատէրը իւր կնոջ  
հետ եկաւ, արտի զլիսին կանզնեց և  
տասց: — «Արդին ժամանակն է հնձե-  
լու — հատիկները թափւում են. վա-  
զը ևս կրինդրիմ հարեաններիս, որ  
զան, ինձ օդնեն»: Ճուտիկները լսե-  
ցին այս խօսքերը և ստատիկ վա-  
խեցան: «Հեռանանք այստեղից», —  
ասացին նրանք իրանց մօքը: Բայց  
մայրը պատասխանեց: — «Մի վախե-  
նար, վասնզը զես այնքան էլ մօտ չէ»: Գիւղացին զնաց հարե-  
աններին խնդրելու. նրանք խոստացան առաւոտը զալ, բայց  
խարեցին ու չեկան:

Միւս օրը երեկոյեան զիւզացին զարձեալ եկաւ արտը և  
տասց: — «Վազն իմ ազգականներին կը կանչեմ աշխատելու. նրանք  
անշուշտ ինձ չեն խարիլ և կը զան»: Ճուտիկները այս անզամ  
աւելի ևս վախեցան: «Գնանք, զնանք շուտով», — կանչեցին միա-  
րիրան: Բայց փորձուած մարին ասաց նրանց: — «Մի վախենար,  
զես տեղափոխուելու ժամանակը չէ հասել»: Գիւղացու ազգա-  
կաններն էլ չեկան նրան օգնելու: Վերջապէս զիւզացին ասում է

կնոջը: — «Ուրիշ ճար չկայ. մնում է, որ մենք ինքներս անենք մեր  
զործը. Ասուուծոյ օգնութեամբ մենք էլ կարող ենք հնձել մեր  
արտը»: Լորն այս խօսքերը որ լսեց, խսկոյն ճայն տուեց իւր  
ճուտերին: — «Զաւակներս, այժմ ահա այստեղից հեռանալու ժա-  
մանակն է. բանի զեռ զիւզացին իւր յոյսն օտարների վրայ էր  
զրել, ես չէի վախենում. իսկ այժմ, եթք նա վճռել է անձամբ  
կատարել իւր զործը, հաւանական է, որ շատ շուտով արտը  
հնձուի»:

Այս ասաց ու ձագերին առաւ, արտից հեռացաւ:

### ԳՐԱԿԱՆ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 68. Լըացրէք հետեւեալ վարժութիւնը:

Եզակի թիւ	Ցողնակի թ.	Եզակի թ.	Ցողնակի թ.
Ասա՛	Ասացէ՛ք	Բարձրացի՛ք	....
Կանզնի՛ք	Կանզնեցէ՛ք	Ապրի՛ք	....
....	Գնացէ՛ք	....	Հնձեցէ՛ք
Խօսի՛ք	....	Հեռացի՛ք	....
Կարդա՛	....	Գցի՛ք	....
....	Խաղացէ՛ք	....	Կտրեցէ՛ք

#### 69. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և թուական անուն- ների տակ գիծ քաշեցէ՛ք:

Գիւղացին երեք կով եւ եօթը եզն ունի: Տարին ունի տասներ-  
կու ամիս, ամիսը շորս շաբաթ եւ շաբաթը եօթն օր: Առաջին  
ամսի անունն է յունուար, երկրորդինը — փետրուար, երրորդինը —  
մարտ, իսկ վերջինինը — դեկտեմբեր: Ցուլիսը տարուայ եօթներորդ  
ամիսն է: Հայրս շորս օր առաջ երեք փութ ու կէս իոդ գնեց  
մեզ համար:

#### 70. Լուծեցէք հետեւեալ նախադասութիւնները:

Երեկոյեան զովարար անձրեւը ջրեց մարզակետիններն ու  
արտերը: Դաշտային թառամած բոյսերը զուարթացան: Նրանք

անտեսանելի կերպով իրանց քարակ արժատների օգնութեամբ  
ծծեցին թաց հողի սննդարար հիւթը:

71. Գրեցէք հինգ նախադասութիւն կոչնական բառերով:

### 86. Ա Ճ Ո Ւ Ն

Աշունը եկաւ, թափուեցաւ սաղարթ,  
իլ մի վնտրիլ զու մանուշակ ու վարդ.  
Բնութիւնը տիտուր, պարտէզը տրտում,  
Չմեռուայ հոգն է ամենի սրտում:


Երեխան փակուած մենակ սենեակում,  
Պատուհանից պարտէզ է նայում.  
Միտրը բերում է գարնան օրերը,  
Մարգերի վրայ զուարթ խաղերը:

Մի տրտմիլ, տղայ, թող անցնի մարտը,  
Նորից կըրացուեն նարգիզն ու վարդը.  
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,  
Նորից խաղալու զու կերթաս պարտէզ:

### 87. Ա Ճ Ն Ա Ն Ք

Ամառը վերջանալուն պէս՝ ծառերի կանաչ տերևներն սկսում  
են փոքր առ փոքր դեղնիլ, թառամել. գերանդին ու մանդազը  
իրանց զործը վերջացնում են արտերում, սարերի և հովիտների  
կանաչ ծածկոցները շորանում են, ծառերի և թփերի հասած  
պտուղները քաղուում:

Աշնան նշաններն ամենն կողմից մարդու աշքին են զիպչում.  
ահա այստեղ, հնձած արտերի տեղ, դեղին ծոսներ են երկում  
միայն. այնտեղ, այդիներում, պտուղներից մերկացած ծառերն  
են տիրութեամբ շարժում իրանց զլուխները և պատրաստում  
ձմեռուայ քունը մտնելու. Կալերում արագ-արագ կալսում են  
հնձած հացարոյսերը:



Քանի գնում, օրերն զգալի կերպով կարճանում են, արեգակն արդէն կողցը է իւր զօրութիւնը, երկինքն յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով և բարակ անձրես մաղտում է վերեփց: Չուող թոշունները շարան-շարան հեռանում են դէպի տաք երկինքը: Դպրոցներում, ամառուայ արձակուրդներից յիտոյ, ուսումն է սկսում:

## 88. ՀՅՆՁԱԾ ԱՐՏ

Աշուն է խորին. ծիծառը թռաւ,  
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.

Միայն դաշտում անհունձ մնացած  
Տխուր ու տրտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը ասում են միմեանց.  
— Ի՞նչպէս մըսում ենք այս ցըտի տակ.  
«Ճատ տխրալի է զետնին խոնհարել  
«Եւ ատօր պտուղդ հողում թաթախել»:

«Ամենայն գիշեր մեզ մօտ ննջում են  
«Անցնող թոշուններն ու մեզ ուսում են.  
«Դազաններն տըորում, քամին մեզ ծեծում.  
«Ուր է մեր տէրը, ում է սպասում»:

Քամին տալիս է նըանց վատ համբաւ.  
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»:

## ԳՐԱՒԱՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

72. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և դերանունների տակ գիծ քաշեցէք:

Ես այսօր իմ դասը լաւ եմ՝ պատրաստել: Դու շարութին ես անում: Նա վեր առաւ իւր գիրքը եւ ինձ տուեց: Մենք այս ամառ ձեզ մօտ հիմք կը գանք: Դուք եղբայրներ էք: Նրանք իրանց տանն են: Կովը, եզը եւ շունը վեժում էին միմեանց հետ, թէ նըանցից ո՞րին տէրն աւելի է սիրում:

73. Հետեւալ նախադասութիւնների մէջ գոյական անունների տեղ յարմար դերանուններ դրէք:

Հովհիւը քշեց իւր նախիրը դէպի դաշտ. հովհիւ մինչեւ երեկոյ նախիրն արածացնում էր դաշտում: Աղանին տեսաւ, որ դեղձանիկն ընկել էր թակարդը եւ աղանին սկսեց ծիծաղել դեղձանիկի վրայ: Արամն ու Գուրգէնն ընկերներից յետ են մնացել, որովհետեւ Արամն ու Գուրգէնը երկար ժամանակ հիսանդ են եղել:

74. Արտագրեցէք «Օտարի օգնութիւնը յօդուածից բոլոր դերանունները»:

75. Լուծեցէք հետեւալ նախադասութիւնները:

Արեգակն արդէն կողցը է իւր զօրութիւնը: Երկինքը յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով: Բարակ անձրեւը մաղտում է երկնչից: Չուող թոշունները շարան-շարան հեռանում են մեզանից դէպի տաք երկրներ:



## Ա Ր Ե Ւ Ա Մ Ա Ն Ո Ւ Կ

Ա.

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ էր:

Արել նոր գուրս էր եկել ու իւր բարի լոյսը տուել Մասիս  
սարին: Մասիսի ձիւնապատ գազաթը սկսել էր այնպէս փայլել,  
փայլվել, այնպէս կանաչ-կարմրին տալ, որ տեսնողի խելքը  
դնում էր: Մի ժամից յետոյ սարի զանազան մասերից բուլայ-  
րուլայ ամպեր բարձրացան և աջ ու ձախ, վեր ու վայր շարժ-  
ուելով, մեծանալով ու փոքրանալով, փոռւելով ու խմբուելով՝  
զանազան ձեեր ստացան:

Այս հիանալի պատկերներն ամենայն առաւօտ նկարում էին  
Մասիսի վրայ, բայց ոչ որի ուշադրութիւնը չէին զրաւում:

Ոչ որ ժամանակ չունէր նայելու, ոչ որ ճաշակ չունէր հիա-  
նալու: Դա մի սովորական երեսյիթ էր, որ շողովարով՝ ամենքին  
իմաց էր տալիս, որ վեր կենան, իրանց դործին կենան, իրանց  
բանին դնան:

Ելքեպանն շտապում էր, որ շուտով այգին զնայ ու անցած  
օրուայ կիսատ թողածն աւարտէ. տաւարածը տաւածն էր արօտ  
տանում, աղջկերը ու հարսները զէպի աղբիւր, էին փազում,  
պառաւները կերակուրի պատրաստութիւն էին տեսնում:

Բայց այս անգամ մէկը կար, որ Մասիսին էր նայում, նրա  
փայլուն տեսքից հիանում ու գուարճանում:

Այդ մի մանուկ էր:

Մի առոյգ գուարթ ու սիրուն մանուկ:

Մի ոսկեթել մազերով, նախշուն աշբերով մանուկ:

Նրա երեան արեկի նման լոյս էր տալիս, ձիւնի նման փայլում:  
Նրա աշբերն արեգակի նման ճառագայթներ էին արձակում:  
Նա կարծես հողեղին չէր, այլ հրեղին:  
Նա, հինգ իմանաս, արեգակի ծնունդ լինէր, Արեկի որդին:  
Եւ հինգ անունն էլ Արեամանուկ էր:

Բ.

Ամեն առաւօտ, երբ արեկի շողըն ընկնում էր Մասիսի վրայ՝  
Արեամանուկը պէտք է վեր կացած լինէր, որ մայր արեկի առա-  
ջին ողջոյնը, առաջին բարի լոյսն ընդունէր:

Նա շատ էր սիրում ամպեղին երեսյթների, ամպեղին ձեերի  
վրայ նայել:

Առաւօտեան արշալոյսը, թէ երեկոյեան վերջալոյսը—որ  
կրակէ գոյնով նկարում են հորիզոնի վրայ կրուտակուած ամպերը—  
հաղարաւոր պատկերներ են ցոյց տալիս նրան:

Ամպերի շարժումները, նրանց ձեափոխութիւնները զրաւում,  
յափշտակում էին նրա ուշըն ու միտքը:

Առաւօտ էր լինում թէ երեկոյ, խաղաղ էր լինում երկինքը  
թէ փոթորկալից, կրուտակուած էին լինում ամպերը թէ ցըուած,  
մի ուղղութեամբ էին շարժում թէ զանազան,—նա այդ ամեն  
ձեերին ու շարժումներին մի միտք, մի նշանակութիւն էր տա-  
լիս, և ամեն ինչ, որ լսել էր հէրեաթներում՝ տեսնում էր  
նրանց մէջ:

Այդ ամպերը շատ անգամ նրա աշբումը վիշապների կեր-  
պարանը էին ստանում և մէկ մէկու կուլ տալիս: Երբեմն դա-  
զաններ էին դառնում ու իրար հետ կուտում:

Երբեմն դառնում էին ոչխարի հօտեր ու մի լիոնաշափ հո-  
վիւ էլ, գերանաշափ մի սրինգ բերնին զրած ածում էր:

Երբեմն դառնում էին մեծ-մեծ վրաններ ու նրանց մէջ ներս  
ու գուրս էին անում վիթխարի հսկաներ:

Երբեմն դառնում էին զօրախմբեր ու իրար զէմ պատերազ-  
մում: Այդ լինում էր աւելի փոթորկի ժամանակ, երբ որոտում էր  
երկինքը, փայլատակում կայծակն ու ամպերն իրար էին խփում:

Արեամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտմունքից, այլ բարձրանում էր մի բարի վրայ ու ամպերին հրամաններ էր տալիս, զոշելով՝ «առաջ, յետ, աջ, ձախ, միասին, կարգնվ, արագ»...

Այսպէս բղաւում էր հեռուից, մինչև կարկուար կամ տարափը վրայ էր տալիս ու մեր մանուկ գորապետին վախցնում, ձգում բարյերի ու ծառախոռնչերի մէջ:

Ինչպէս տեսնում էր՝ մեր Արեամանուկը թէպէտ դեռ փոքր էր, — հաղիւ տասը կամ տասներկու տարեկան կը լիլինէր, — բայց շատ սրտոտ էր ու սրամիտ:

Երեսում էր, որ ժամանակով մեծ ու երեսլի մարդ պէտք է զառնար: Այսպէս էին ասում բախտ զուշակողները, այսպէս հաւատացած էին ամենը:

Բայց նա այժմ դեռ մի զառնարած էր:

Դ.

Այս, ինչ որ ասում եմ՝ ով է իմանում, թէ մեզանից բանի բանի տարի առաջ է եղել: Եթէ ասեմ հաղար տարի, երկու հաղար տարի, երեք հաղար տարի՝ էլի թիւ կըլինի:

Այդ էին ժամանակներում Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատեան մեծ զաշան է, ուր որ մեր սուրբ էջմիածինն է, երեան բաղաքն է, երասխ գետն է, Գեղամայ ծովն է՝ ահա այդ զաւառումը մի մեծ գիւղ է լինում, Արեան թէ Արմաւան անոնվ, հաստատը չգիտեմ և յատուկ տեղն էլ շեմ կարող ձեզ ասել:

Արմաւանի օդն ու ջուրը շատ մաքուր էր ու առողջաբար: Նրա աղբիւրը բառասուն ակն ունէր, բառասուն տեղից բղխում էր ու յետ միանում, զառնում մի այնպիսի գետ, որ եօթը ջրազաց էր պտրտեցնում: Բացի զբանից՝ գիւղի հանգերն էլ լիքն էին անմահական աղբիւրներով: Այս աղբիւրներն ամենըն էլ մի մի անուն ունէին, իրանց յատկութեան յարմար տրուած. որին ասում էին «կաթնաղբիւր», որին «սառնաղբիւր», որին «տղաբերուկ», որին «պարկակերի», որին «գառնակերի» և ուրիշ անուններ:

Լաւ աղբիւրը շատ սիրելի բան է: Նա իւր խմողի երեսին խնդում, ծիծաղուն է, ականջին քափում, թաքուն բաներ ասում, մօտը պառկողի միտքն օրօղում է ու վրան անուշ քուն քեզում: Երանի, հաղար երանի այն մարդուն, որ իւր մանկութեան ժամանակ այդպիսի տեղերում է անցկացրել իւր կեանքը, անմահական աղբիւրների ու ծաղկունքների ծոցում է մեծացել...

Արմաւանի հայերը, թէ մարդիկ և թէ կանայք, բոլորն էլ զեղեցկաղէմ, վայելչակազմ, ուժեղ ու բարձրահասակ էին: Գլխացաւ, փորացաւ, սրտացաւ, բկացաւ, ծաղիկ, կարմրուկ և ուրիշ բոլոր մեր տեսած ցաւերի անունը նրանք չէին լսած: Մարդիկ հիւանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրաւորուած էին լինում զազանից կամ թշնամուց և կամ ծառից վայր ընկած: Նրանց կեանքը շատ երկար էր, շատ էին ապրում: Հատ ըիշ ապրողը՝ հարիւր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու և երեք հարիւր տարի էին ապրում ու միքանի անգամ ատամները փոխում, նոր ոյժ ստանում:

Երեացած հայրը ունենում էր քսան, երեսուն զաւակ, երեք չորս այդշափ էլ թոռներ, մի այդքան էլ ծոռներ: Մի զերդաստանի ընտանիքի մէջ մինչև երեք-չորս հարիւր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ՝ ամենափորը՝ իրանց մեծին, և ամենըն ի միասին մեծ հօրը:

Մեծ հայրը միւս բոլոր հայրերի զլխաւորն էր, զլուխն էր, և այդ պատճառով ասում էր հայրապետ, այսինքն հայրերի զլուխ, կամ նահապետ, որ միենոյն նշանակութիւնն ունի:

Կերպաստանի բոլոր անդամները մի յարկի, մի ծածկաբանի տակ չէին մնում, այլ ջոկ-ջոկ յարկերի ու ծածկոցների: Ամեն անզամ, երբոր մէկին պատկում էին՝ նրա համար առաջուց մի վրան էին գործում բրդէ կամ մազէ թելից: Այսպիսով տարէցտարի շատանում էր վրանների թիւը: Վրաններն այն յարմարութիւններն ունէին, որ շարժական էին, և ուր ուզում էին՝ տանում էին, ամառը՝ տեղի բարձր ու լիռնային տեղեր, ձմեռը՝ ցածր ու դաշտային: Քարաշէն տներ էլ ունէին, բայց հասարակ: Դրանք մի տեսակ ձմեռանոցներ էին, աւելի անասունների հա-

մար, քանթէ մարդկանց: Միայն մեծ նահապետն էր ունենում լաւ բարաշխն տուն:

Մեծ նահապետը որ վախճանում էր՝ նրա մեծ որդիրը հեռանում էին միմեանցից և դառնում էին ջոկ-ջոկ նահապետներ: Նրանք երկիրն էլ էին բաժանում իրանց մէջ և ամեն մէկը մի ջոկ գաւառում էր բնակւում:

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Արարատեան գաշտը, երասմի ափերը, Արագածի արեմտեան և Մասիսի հիւսիսային երեսները, Գեղամայ ծովի արեմտեան ափերը, Գատնու և Հրազդան գետերի հովիտներն իրանց շրջակայ լեռներով մի նահապետի ձեռքին էին և այդ նահապետն էր մեր Արևամանուկի հայրը:

Արևամանուկի հօր անունն էր Արևամանեակ, բայց նրա որդին ու թոռները դժուարանում էին ասել «Հայր-Արևամանեակ», որովհետեւ շատ երկար էր, այդ պատճառով ասում էին «Հայր Մանեակ», կամ նրա մօրն էլ փոխանակ ասելու «Մայր Արևամատ»՝ ասում էին «Մայր-մա» կամ «Մարմար»: Նոյն իսկ Արևամանուկին չին ասում Արևամանուկ, այլ «Արմիկ» կամ «Արամիկ»:

Բայց թէ ինչո՞ւ ամենի մէջ էլ «արե» կայ՝ այդ ես չգիտեմ. միայն շատերն ասում են՝ այդ նրանից է, որ մենք, հայերս, մի ժամանակ արևապաշտ ենք եղել, մեր նահապետն էլ համարում է եղել արեի փոխանորդ, նրա ազգական, ցեղ, ծնունդ. ահա այդ պատճառով նրանց մեծ մասի անունն էլ հարեստ էր սկսում: Բայց այս տեսակ մուլթ բաները մենք յետոյ կիմանանք. հիմա մենք դառնանք մեր Արևամանուկին:

Դ.

Ահա այսպէս մեր սիրելի Արևամանուկը Արևամանեակ նահապետի որդին էր:

Դեռ եօթը տարեկան հասակում նրա թիկունքն ու կուրծքն այնքան լայն էին ու մէջքն այնքան բարակ, որից երեսում էր, որ նա մի փոքր առիւծ էր, որի նմանին մեր հէրիաթներում ասում են ատլան բարասի, այսինքն՝ «առիւծի ձագ»,

կորիւն առիւծի: Նրա աշքերը խոշոր-խոշոր և կրակոտ էին, երկայն թերթեռնքները մինչև վարի կոպերն էին հասնում, զիսի մազերը խիտ էին ու երկայն:

Հին ժամանակները մազ ածելելու սովորութիւն չունեին, բայց խուզում էին ուսերի հաւասարութեամբ, սանտրում էին դէպի յետ ու կապում վարսակալով, այսինքն մի մազակապ ժապաւէնով: Արևամանուկի մազերի գոյնը հրաշէկ էր, այսինքն կրակի գոյն ունէր և փայտում էր ջուհարի նման: Նա համարում էր «հրահեր», այսինքն կրակէ մազեր ունեցող: Այդ տեսակ մադեր ունեցողին մեր հէրիաթներում ասում են ոսկէքամնքուլ: Արևամանուկի մազերը չէին խուզում: Այս տեսակ մազեր ում վրայ էլ լինում էր՝ չէին կտրում: Նա իւր մազերը երկու հիւս էր անում և աջ բաժինը դէպի ձախ, ձափինը դէպի աջ տանում, բկովը երկու անգամ պատ տալիս, զգին կապում ու ծայրերը կախ զցում մէջըին: Նրա համար էր այսպէս անում, որ խաղալիս ու վազվակիս մազերն իրան չխանդաքարեն:

Երբոր Արևամանուկը ծնւում է՝ նրանից յետոյ նրա մայրը երկար ժամանակ երեխայ չէ բերում, այդ պատճառով նրան եօթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չէ կտրում: Ամբողջ օրը խաղում էր Արևամանուկը, բայց հէնց որ ճաշելու ժամանակ զալիս էր՝ նա առաջ մի նախաճաշիկ էր անում մօր ծծովն ու յետոյ ճաշն ուտում: մէկ էլ ճաշելուց յետոյ էր վրայ ընկնում մօր ծծին ու բերանը քաղցրացնում: զիշերն էլ մօր ծոցումն էր ընում և ամեն զարթնելիս ծիծը բերանն էր առնում:

— Բաւական է, որդի, էլ ինչ կայ, որ ինչ ծծես, ծծերս ցամաքել են,—ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը դնում էր բերանը և զլուխը շփելով ընացնում:

Արևամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել:

Զատ անգամ, երբ հարսները կովերը կթելիս էին լինում, նա անցնում էր միւս կովմը և կովի ծծերից մէկը բերանն առնում, ծծում: Հարսները թթին խփում էին, որ յետ բաշուի, բայց նա էլ չիգրու արձակում էր հորթի կապը, խփում էր կովին ու այսպիսով ինքը յաղթում էր հարսներին և ուզածի չափ ծծում:

Պատահում էր, մինչև կովի կթելը՝ ինքն արդէն ցամաքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած։ Կերպուրներից նա ամենից շատ սիրում էր իւղն ու մեղրը։ Իւղը նա կաթի պէս էր խմում, իսկ մեղրաբլիթը դաթի պէս ձեռքն էր առնում, կծոտում։

Էլ ինչ ասել կուգէ ուրեմն, ով որ տարով կըմեծանայ՝ մեր Արևամանուկը օրով էր մեծանում ու զօրանում։ Դեռ տասը տարեկան հաղիւ կըլինէր, այնպէս էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում էր, թէ առ նուազն տասնեհինդ կամ տասնեվեց տարեկան կըլինի. բայց երբ դառաւ տասնեհինդ տարեկան՝ արդէն մի կատարեալ չինարի ծառ և էլ իւր հասակին վայել չէր համարում իւր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլ քսան-երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ կպչում, նրանց հետ մըցում և ամեն տեսակ մարզմունքների մէջ յաղթում էր ամենքին։

Միշտ յաղթելը և ոչ մի անգամ շաղթուելը մեր Արևամանուկի համար դառաւ մի այնպիսի յատկութիւն, որ յաղթուելն ու մեռնելը—նրա համար մինոյնն էր։ Այդ բանը նկատել էին նրա խաղընկերները, և երբ պատահում էր իրանից աւելի ուժեղներին՝ նրանք իննայում էին Արևամանուկին և չէին ուզում յաղթել, որ նրա սիրու չկոտրուի։ Այս տեսակ վեհանձնական սովորութիւն ունէին Նրմաւանցիք. նրանք նշանաւոր բացին և ուժեղին միշտ խնայում էին, նրան սիրում, պաշտում էին և իրանց պարծանքն էին համարում։

b.

Արևամանուկն արդէն դառել էր տասնեհինդ տարեկան, բայց իւր ծնողների հսկողութիւնիցը դեռ չէր ազատուել։ Նրա ընկերներիցը որը տաւարած էր, որը հովիւ, որը եփնարած էր, որը հօտաղ, բայց նրան գառներն էին միայն պահ տալիս, այն էլ միայն գարունքը, իսկ մնացած ժամանակ տանիցը չէին դուրս թողնում։ 2էին դուրս թողնում, որովհետեւ զիտէին, որ նա ոչ մի տեղ հանգիստ չի մնալ, իւր ուժը կըփորձէ ամեն բանի վրայ ու փորձանքի մէջ կընկնի։

Բայց որքան շատ էին զսպում նրան ու հսկում վրան՝ նա այնքան աւելի էր ցանկանում վազել, ընկնել անտառները, ձորերը, բան տեսնել, բան շինել. իւր պարսատիկն ու նետաղեղը փորձել։

—Մայրիկ, ինձ ուղարկեցէր տաւար, — աղաչեց նա մի անգամ իւր մօրը։ — Ես աւելի լաւ տեղեր կըտանեմ արածացնելու, կովերն էլ աւելի կաթ կըտան և շուտ չեն ցամաքիլ։

— Ի՞նչ հարկաւոր է, ո՞րդի, — պատասխանում է մայրը։ — Մենք այնքան տաւար չունինք, որքան պահողներ ունինք. նրանք էլ զիտեն, թէ ո՞րտեղ պէտք է արածացնեն։

— Բայց ես, մայրիկ, մինչև երբ պէտք է տանը պարապ մնամ ու երեխանց հետ խաղամ։ Աղջիկ էլ չեմ, որ բուրդ զգեմ, զուլպայ գործեմ, իլիկ մանեմ։ 2է որ ես տղայ եմ։ Իմ ընկեր տղայքը բոլորն էլ տաւար են գնում. ես ինչու չդնամ։

— Տաւարածութիւնը հեշտ բան չէ, հոգիս։ Տաւարը շատ հեռու տեղեր են տանում։ Գող է, զաղան է, ամեն ինչ պատահում է տաւարածներին։

— Ես էլ հենց զըա համար եմ ուզում տաւար գնամ, որ մի քիչ հեռու տեղեր տեսնեմ։ Ինձ ինչ պիտի անեն զողերն ու գաղանները։ Բա մեր շներն ինչացու են։ Մեր Կտրանն ու Խեղդանը որ մօտս լինին, էլ ինչ գող, ինչ զաղան կըմօտենայ մեր տաւարին։ 2է, մայրիկ, ես պիտի զնամ տաւար։ Բայց եթէ շթողնէր՝ ես կըփախչեմ, կընկնեմ Մասիսի ձորերը, կերթամ բացերին կը դտնեմ, կասեմ։ «Եկել եմ ձեզ մօտ, որ ինձ սովորեցնէր լաւ ձի հեծնել, նետ ձգել, թուր ու նիզակ զործածել»։

— Արմիկ, Մասիսի բացերը սուր ու թուր չունին, ոչ ձի հեծնել զիտեն, ոչ նետ ձգել։

— Բա՛ էլ ինչի բացեր են, մայրիկ։

— Հենց նրա համար չունին, որ շատ բաց են։ Նրանք այնքան բաց են, որ կարիք չունին զէնք ու զրահի։ Այնքան ուժով են, որ ահազին կաղնի ծառը արմատահան կանեն, և այդ կըինի նրանց համար՝ ինչպէս մի թեթև մահակ, բայց այդ մահակով նրանք հազար ձիաւորի պատասխան կըտան։ Նրանք ինչ կանեն

նետաղեղը, քանի որ Մասիսի ստորոտից բլրաշափ ժայռերն այնպէս են շպոտում, որ սարի գլխովն անց են կացնում, միւս կողմը դցում:

— Այդ ինչքան ուժով են, մայրիկ. ով զիտէ, իրանք էլ ինչ ահապին հսկանել են:

— Իհարկէ, այնքան մեծ-մեծ են, որ նրանց տակին ոչ թէ ձի, այլ ոչ ուզտ և ոչ փիդ կըկարենայ զիմանալ: Ամեն մինը մի սարի չափ կայ: Երբ նրանք դուրս են զալիս իրանց խոր ու մութ այրերից ու որսի յետկից ընկնում, Մասիսի ձորերը զբա-դըմում են ու զաշտերը զողոզում: Երբ որ նրանք կրակ են անում, որ ճաշ եփին, ով զիտէ, քանի-քանի գերան են զարտում իրար վրայ: Նրանց խարոյիկի ծուխն ու ալիքը Մասիսի զագա-թիցն է դուրս զալիս ու վրան ամպ անում:

— Եթէ այդպէս է, մայրիկ, նրանց մօտ զնալ չի լինի, նրանք, ով զիտէ, մարդ էլ են ուսում:

— Զէ, հոդիս, նրանք մարդակեր չեն: Իմ պապը մէկ անգամ՝ զնացել է նրանց մօտ: Ես այդ ժամանակ շատ փոքր եմ եղել, ինձ յետոյ են պատմել: Ասում են. «Պու ով ես». Նա էլ ասել է՝ «Ես Երևազանց ցեղիցն եմ»: Այդ որ լսել են, ասել են. «Որովհետեւ դու Արեազանց ցեղիցն ես՝ քեզ վնաս չենք տալ. բայց եթէ Վի-շապազանց ցեղիցը լինէիր՝ մեծ կտորդ ականջդ կըթողնէինք»:

— Ուրեմն նրանք մեր ցեղին սիրում են, մայրիկ, իսկ Վի-շապազանց ցեղին ատում:

— Այս, մեր ու դրանց մէջ կարծեմ մի տեսակ ազգականութիւն կայ: Եյժմեան քաջերի մեր ցեղիցն է եղել:

— Որ այդպէս է ես կերթամ նրանց մօտ, կասեմ. «Ես ձեր պապոնց երեխան եմ. նրանք էլ ինձ լաւ պատիւ կըտան:

— Պու այդպէս ես կարծում, բայց ով զիտէ, վայ թէ քեզ այնտեղ պահեն ու էլ բաց շթողնեն: Կրգցեն մի խոր ու մութ այրի մէջ, մի ահապին ժայռով էլ բերանը կրփակեն, յետոյ զնա կաց այնտեղ ու սպասիր, թէ երբ պէտք է ազատեն:

— Թէ որ այդպէս է ես էլ չեմ զնալ նրանց մօտ, բայց տա-ւար պիտի զնամ, ինչ կուգէք, արէք:

— Իհարկէ, մըդի, էլի լաւ է տաւար զնաս, քանթէ քաջերի մօտ: Բայց գիտես, սիրելի Նրմիկ, բո հայրը քեզ ուրիշ տեսակ է ուզում պահել: Նա ուզում է, որ զու տունը պահել, տունը կառավարել սովորես, զնացող եկողի հանդիպես, նրանցից խելք ու շնորհք վերցնես, մարդավարութիւն սովորես, և ոչ թէ ընկ-նես սարերն ու վայրենանաս: Ահա պատճառը, որ հայրդ քեզ տաւար չէ ուզարկում: Բայց նա դէմ չի լինի, որ զու լաւ գիտենաս ձի նստել, նետ ձգել, նիզակ ու վահան զործածել: Հասկացար, բայց որովհետեւ սիրտդ շատ է ուզում տաւար զնալ՝ վնաս չունի, միքանի ժամանակ էլ տաւար զնա: Այդ քո առա-ջին փափազն է, թող կատարուի. Թող կողը ու մէջը մի քիչ էլ տաւարումը հաստանան:

Զ.

Արմաւանի երեխայրը շատ ուշ էին սկսում տնային հոգսերին մասնակցել: Մանուկները զառնում էին տասնեհինգ-քսան տա-րեկան, բայց գեռ էլի համարում էին տղայ, այսինքն երեխայ: Ինչև տասնեչորս-տասնեհինգ տարեկան զառնալը ոչ մի պա-րապմունք չէին ունենում, բացի ուտելուց ու խաղալուց:

Նրանց սկզբնական ուսումն ու կրթութիւնն էլ խաղն էր: Եւ պէտք է ասենք, որ պակաս ուսում չէր, և շատ էլ լաւ էր: Էաւ էր նրանով, որ մեզ նման վաղօրօր չորս պատի մէջ չէին փակւում ու կորցնում իրանց առողջութիւնը, մէկ էլ նրանով՝ որ նրանց խաղերն անմիտ ու անօգուտ խաղեր չէին: Նրանք իրանց խաղերով աւելի լաւ էին պատրաստում իրանց ապագայ գործունէութեան, ապագայ պարապմունքների համար, քանթէ հիմա մենք:

Նրանց հարկաւոր էր շինել ուժեղ, ճարպիկ, սրամիտ, հնա-րագէտ, առարինի. պէտք է իմանային լաւ ձի հեծնել, լաւ վա-զել, լաւ լողալ, ծառերի վրայ մազլցել, պառակների և ժայռերի վրայ բարձրանալ, մեծ ոստիւններով ցատկել, սուր ու նիզակ գործ ածել, վահանով պաշտպանուել, ուղիղ պարսատիկ ու նետ ձգել. պէտք է իմանային անասնապահութիւն, վար ու ցանք,

փայտտաշութիւն, քարտաշութիւն, դարբնութիւն... և այս բոլորը այն ժամանակուայ երեխայրը սովորում էին խաղալով:

Մեծերը նրանց չէին ասում, թէ այս արէք և այն շինեցէք, այս խաղացէք և այն մի խաղաք: Երեխայրը իրանց կամքովն էին անում ինչ որ անում էին:

Փոքրերը՝ փոքրն ու հեշտը, մեծերը՝ մեծն ու դժուարը, և այնքան սիրով և ուրախութեամբ, այնքան ողևորուած, որ շատ անգամ հացն էլ էին մոռանում:

Նրանց զիշերուայ խաղերն ուրիշ էին, ցերեկուանը ուրիշ, ամառուանը ուրիշ, ձմեռուանը ուրիշ. ուրիշ էր տղերանց խաղը, ուրիշ էր աղջկերանցը: Ամեն տեղի, ամեն դէպի, ամեն ժամանակի յարմար խաղեր ունէին:

Խաղում էին ամենախիստ կարգապահութեամբ:

Եթէ խաղացողները լինում էին մինչև հարիւր հոգի, էլի այնպէս կարգով էին խաղում, որ ոչ մի անկարգութիւն չէր պատահում, և եթէ պատահում էլ էր երեսն՝ մեղաւոր երեխային խսկոյն հեռացնում էին իրանցից, որ մեծ պատիժ էր համարւում:

Խաղերի մեծ մասը երկու խմբով էին խաղում: Առաջ երկուսին մայր էին նստեցնում, միւսները ձագեր էին դառնում: Զագերը զոյզ էին դառնում և վիճակով ընկնում մէկը մէկ և միւսը միւս մօրը: Այսպիսով բոլոր խաղացողները դառնում էին երկու խումբ, ամեն մէկը իւր մօր հովանաւորութեան և պաշտպանութեան տակ: Մայրը իւր ձագերից ամեն մէկի պաշտօնն իրան հասկացնում էր, և նրանք պիտի կատարէին իրանց մօր պատուերը ամենայն ճշտութեամբ և ճարպիկութեամբ: Այս խաղերի մէջ շատ լաւ սովորում էին պաշտպանուելու և յարձակուելու կերպերը. սովորում էին շարքով կանգնել, շրջան կազմել, խմբուել, ցրուել, մէջը մէջը տալ, վայր թափուել, չորեքթաթ վազել, փորսող տալ, մի ոտքով վազել, ծեծի դիմանալ, հակառակ խմբի բոլոր շարժմունքները զիտել, նրա մտադրութիւնը նախագուշակել:

Այս խաղերի մասին էլ չեմ ուզում երկարացնել խօսքս: Դուք ինքներդ, եթէ զիւղի երեխայր էք, կարող էք ասել, թէ ինչ

ՀՊ  
ԱՃԳ:

» սիրում: Պառաւներն ան էլ խաղալիս է եղել, և սուտ ըստ լաղերի մէջ նա այնպէս շուտ ճարպիկացաւ, « ու չէ ձագ չէր դառնում, այլ իրանից մեծերի վրայ էր մայր նստում, և ամեն երեխայ աշխատում էր, որ իրան վիճակուի, իրան ընկնի նրա ձագը դառնալ, նրա զօրեղ պաշտպանութեան տակը գտնուել:

Հ.

Ահա այս աստիճան զօրացած էր մեր Արևամանուկը՝ երբ որ սկսեց տաւար զնալ: Տաւարումն էլ երկու թէ երեք օր միայն փոքրութիւն արաւ. շուտով տաւարածապետ դառաւ, այսինքն տաւարածների զլխաւոր: Տաւարածապետ լինելը հեշտ բան չէ: Նա պէտք է ամենիցը զօրեղը լինի և ամենից ճարպիկն ու սրտուը:

Ճշմարիտ է, նրա զօրեցը հեշտ է նրանով, որ պիտի նստէր սառն աղբիւրների մօտ, հով ու զով տեղերուումը, միւսներին հրամայէր, որ տաւարը մակաղից գուրս անեն, զոմէշները՝ ցեխերից այս կողմը քշեն, այն կողմը տանեն, յետ տան, ժողովեն, ականեն, բայց և դժուար է նրանով, որ եթէ տաւարներից մինը կորչէր՝ նա պիտի ման զար, գտնէր, զող ու զազանի ճանկերից փրկէր: Իսկ գաղաններ այդ ժամանակ շատ ու շատ կային. հիմա այնքան զայլ ու աղուէս չկայ, ինչքան որ այն ժամանակ բաւթառներ ու փալանգներ (փազրեր) կային: Արևամանուկը մի քանի շաբաթ շաբունակ շատ լաւ պահեց տաւարը, այնպէս որ ոչ մէկի քիթը չարնեց, բայց ասած է. «Տատն ամեն օր զաթայ չի թիխ»:

Մէկ անգամ մի եղը կորցրեց. շատ ման եկաւ, վերջը մի զոռոցի ձայն հասաւ ականջը: Մինչև ինքը ականջ կըդնէր, որ տեսնէր՝ որտեղից է զալիս ձայնը՝ իւր բաջ շները, Խեղդանն ու

Եղը վազուց արդէն շունչը փշել էր: Անիրաւ գազանը մի հայտ հարուածով կոտրել էր նրա մէջքի սեռը և մի ծուէն կաշել էր հանել:

Արևամանուկը մաշկեց գազանն ու մորթին քաշ տալով դնաց տուն: Նրա այս քաջագործութեան համբաւը շուտով տարածուեց ամեն տեղ: Տասնեհինգ տարեկան հասակում վազը խեղղել—հեշտ բան չէ: Բայց ով որ իմանում էր, թէ այդ քաջութինը Արևամանուկն էր արել՝ չէր զարմանում. ասում էին, նա կարող է առիւծի բերանն էլ ճղել մէն մենակ, առանց շների օգնութեան:

Արմաւանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութին էր անում՝ նրա վրայ գովասանական երգ էին շինում ու երգում ամեն տօն օր: Երգում էին տղերքն ու աղջկերը ձեռք ձեռքի բռնած, խմբով ու պարելով: Այս անցրից յետոյ Արևամանուկի վրայ էլ շինեցին մի գովասանական երգ, որ ասում էին տղերքն ու աղջկերը վոխ առ վոխ:



Արևամանուկը ոչ ու:

պէս տաւարս-:

Արևամանուկը ոչ ու:

Հակից: Մահակը ձեռին՝ վազեց ձորակի մէջ հաջելիս: Հեռուից նկատեց որ ու ձեզել ահագին եղանը, թանթուլները դրել նրա մէջքին, իսկ գլուխը դէպի շները ծուած՝ այնպէս կատաղի կերպով նայում էր, որ աշբերից կրակ էր թափում: Ճները հաջում էին հեռուից, պոշերը ներս քաշած և սիրտ չէին անում գազանին մօտենալ:

Արևամանուկն էլ շմտածելով, թէ ինչ պէտք է անէր արդեօք՝ սաստիկ բարկացաւ շների վրայ և գոռաց. «Խեղղան, խեղղիք, Կտրան, կտրիք», ու ինը մի ճարպիկ ոստիւնով թռաւ, ընկաւ գազանի մէջքի վրայ և բռնեց նրա վզիցը: Այդ տեսնելով շները սիրտ առան ու բռնեցին գազանի յետեից: Գազանը բարկացաւ և ցատկեց տեղիցը, բայց նրանից պոկ չեկան ոչ Արևամանուկը և ոչ շները: Գազանն աւելի կատաղեց. երեսը շրջեց, բաց արաւ ահագին ոեխը և ուզում էր Արևամանուկի դլուսը բռնել ու փշել. բայց սա իսկոյն ձեռքը ձեզ գազանի բերանն ու լեզուի տակից այնպէս պինդ բռնեց-քաշեց, որ գազանի թաթուլները թուլացան և նա սկսեց խռիսուացնել: Երբ գազանը խեղճացաւ, թուլացաւ՝ Արևամանուկը նրան իւր տակն առաւ, աջ ոտքը նոյնպէս կոխեց նրա բերանը և երկու ձեռքով քաշեց նրա լեզուիցը: Այդ միջոցին Խեղղանը բռնեց գազանի բկիցը, Կտրանն էլ փորատակերիցը: Այսպէս միացած ուժով գազանին անշնչացրին, սատկեցրին:

Քափ ու բրտնը մէջ կորած՝ յետ քաշուեց Արևամանուկը և նոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր իւր սպանածը: Վազը էր, մի ահագին ու բաւթառ վազը, որ բոլոր շրջակայրի վրայ իշխում էր: Նրա երկիւպից ոչ ոք չէր համարձակուում տաւար կամ ոչ խար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արևամանուկը: Ամբողջ զիւղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կտրողանում:

Վախեցաւ ծերը, մնաց զարմացած.  
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,  
Բայց ձկան մասին երբէք չէր լսել,  
Թէ նա մարդու պէս կարող է խօսել:

— Գնա, Տէր ընդ քեզ,—ասաց ծերունին,—  
«Ինձ չէ հարկաւոր փրկանք թանկագին.  
«Գնա քեզ համար դու ծիրանի ծով  
«Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

Բ.

Այս դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,  
Պատմեց պառաւին, թէ ինչ բան տեսաւ.  
— Այսօր ես ծովից, գիտես ինչ, ա կնիկ,  
«Բոնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ.  
«Ոսկի եմ ասում, և ոչ քո գիտցած,  
«Այսպիսի հրաշք ոչով չի տեսած:  
«Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,  
«Աղաչանք արաւ, որ յետ ձգեմ ծով:  
— Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ,  
«Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք»:  
«Բայց ես ոչ մի բան չպահանջեցի,  
«Ոչինչ չեմ ուզում, գնա, ասացի,  
«Գնա քեզ համար դու ծիրանի ծով  
«Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառաւը երբ որ այս բանը լսեց,  
Խեղճ ալեսորին խիստ յանդիմանեց,  
Թէ ինչու ձկնից փրկանք չէ ուզել  
Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել:

— Այ յիմար անմիտ, — հայնոյեց ծերին,—  
«Քոնէ կատէիր դու ոսկի ձկնին՝

## ՈՍԿԻ ԶԿՆԻԿ

Ա.

Մի ծերուկ ձկնորս և իւր պառաւ կին  
Բնակում էին մեծ ծովի ափին.  
Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից,  
Պառաւն էլ տանը թել մանում բրդից,  
Այսպէս միասին մի հին գետնատան  
Երեսուն երեք տարի ապրեցան:

Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով,  
Որ ձուկը որսայ իւր մաշուած ցանցով.  
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
Առաջին անգամ միայն տիղմ հանեց:  
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,  
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով:  
Եսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,  
Ո՞վ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.  
Նա բերաւ իւր հետ մի ոսկի ձկնիկ,  
Չկանց արքայի դուստրը գեղեցիկ.  
Ծերի ցանցն ընկաւ՝ իրքե իսեղճ զերի՝  
Ոսկի աղջիկը ձուկ—թազաւորի:

Խեղճ ոսկի ձկնիկ. ինչպէս է խնդրում,  
Մարդկային լեզուով ծերին աղաչում.  
«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,  
«Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք.  
«Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,  
«Ուղիղն եմ ասում, ինձնից կըստանաս»:

«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կնկան,  
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Դարձաւ ծերունին, ծովի ափ գնաց.  
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).  
Բոկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին:  
— Ի՞նչ ես կամենում, ծերուկ,—հարցրեց:  
Ծերը զլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
մնա նախատում է իմ պառաւ կնիկ.  
«Հանդիսու չի թողնում խեղճ ալեռիս,  
Վըսս մըթմըթում, ուշոնց է տալիս.  
Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան.  
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց:  
— Գնա, Տէր ընդ քեզ, մի տիրիլ, — ասաց. —  
«Թող քո պառաւը շատ չնեղանայ,  
Այսօր նա մի նոր տաշտակ կրունենայ:

9.

Յետ զարձաւ ծերը դէպի իւր անակ,  
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.  
Բայց կինը զոհ չէր. նա այս անդամ էլ  
Բոկսեց ծերին սաստիկ նախատել.  
— Գնացիք, անխելք, տաշտակ ուզեցիք.  
«Ինչու մի ուրիշ բան չինդրեցիք.  
«Յետ գնա շուտով, անմիտ անասուն,  
«Պուլս տուր նրան և ուզիք մէկ տուն»...

Ծերունին զարձաւ, ծովի ափ գնաց.  
(Այս անդամ տեսաւ ծովը պղտորուած).  
Բոկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին:

— Ի՞նչ ես կամենում, ծերուկ,—հարցրեց:  
Ծերը զլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի ձկնիկ,  
«Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ.  
«Խեղճ ալեռիս հանդիսաւ չի թողնում,  
«Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
— Գնա, Տէր ընդ քեզ, մի տիրիլ, ասաց. —  
«Թող լինի այնպէս, ինչպէս կամենար,  
«Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենար»:

Ծերը յետ դարձաւ կըկին դէպի տուն,  
էլ նա չգտաւ իւր հին զետնատուն.  
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,  
Կտուրից հանած ծխահաններով.  
Պատ ու վառարան մաքուր սուադած,  
Կրով ու կաւճով սպիտակացրած.  
Վարպետի տաշած կաղնի տախտակից  
Մեծ զուռն էր կախած լայն բակի կողմից:

Պատուհանի տակ կինն ուռած նստել,  
Իւր շարութիւնից ուզում է տրաքել.  
Ի՞նչ անէծք ասես աշխարհիս տակին՝  
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի զլսին.  
Վերջը՝ երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,  
Մոռութը կախած՝ ծերունուն զարձաւ.  
— Անշնորհը ծերուկ, տնակ ուզեցիք,  
«Երկի քո միջ միծ բան կարծեցիք.  
«Յետ զարձիք, անխելք, յետ զարձիք, դնա,  
«Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա,  
«Թը էլ չեմ ուզում մեալ զեղչուկ կին,  
«Ռուզում եմ լինել զերազնիւ տիկին»:

Դ.

Ծերունին զարձեալ ծովի տփ զնաց.  
 (Այս անգամ տեսաւ ծովը վրդովուած.)  
 Բակսեց կանչել ոսկի ձկնիկին.  
 Չուկը լողալով մօտեցաւ ծերին:  
 — Ի՞նչ ես կամենում, ծերուկ, — հարցըց:  
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
 «Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
 «Հանգիստ չի տալիս ինձ իմ շար կնիկ.  
 «Ել չի կամենում մնալ գեղջուկ կին,  
 «Ուզում է լինել գերազնիւ տիկին:  
 «Հգիտեմ՝ զլուխն ինչ քամի մտաւ,  
 «Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խզնաց.  
 — Դնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, — ասաց.  
 «Թող բո պառաւը հէնց այսօրուանից  
 «Ազատ համարուի իւր գեղջկութիւնից»:

Յետ զարձաւ ծերը և ինչ է տեսնում,  
 (Կարծեց՝ ցնորք է աշքին երեսում).  
 Մի տուն հոյակապ. վերնասրահում  
 Պառաւն է կանգնած՝ ինչպէս նոր խանում,  
 Հազին սամուրէ բաճկոնակ սիրուն,  
 Գլխին դիպակէ շարդաթ դոյնզպոյն.  
 Վիզը զարդարած մարգարիտներով,  
 Մատներին մատնիք, անզին քարերով.  
 Մաշիկներն ինչպէս կաս-կարմիք որգան,  
 Միւս հագուստներն էլ մետաքս պատուական.  
 Ճառաներ ունի միքանի տասնեակ,  
 Բոլորն էլ իրան հլու հպատակ:

Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց,  
 Խեղճ ծառաներին ծեծել սկսեց.

(Երեկի ուզեց ցոյց տալ իւր մարդին,  
 Որ այժմ ինքն է գերազնիւ տիկին).  
 Հայհոյանը թափեց ամենըի վրայ,  
 Տեղի-անտեղի քօթկեց անխնայ.  
 Մէկի մազերից բռնեց, բաշրջեց,  
 Միւսին էլ մի լաւ ապտակներ զարկեց:

Ծերը մօտեցաւ դող-դող բայլերով,  
 Ասաց պառաւին խոր գլուխ տալով.  
 — Բարձր գերազնիւ խանում-խաթունիս.  
 «Հիմա խօմ գո՞հ ես, հանգիստ կըլինիս»:

Պառաւ տիկինը այնպէս բզաւեց,  
 Որ խեղճ ծերունու լեղին պատառեց.  
 Նըան հրամայեց, որ իսկոյն գնայ,  
 Գում աւելէ, բերէ ու այնտեղ մնայ:

Ե.

Մէկ երկու շաբաթ հազիւ անցկացաւ,  
 Պառաւ խանումը նորից կատղեցաւ:  
 — Ջուտ կանես, կերթաս, — ասում է մարդին,  
 «Ու կողմանէ կասես ձկնիկին,  
 «Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
 «Ուզում եմ ազատ թագուհի լիներ»:

Այս խօսրի վրայ ծերունին սոսկաց  
 Եւ ազաշելով պառաւին ասաց.  
 — Գժուել ես, ա կնիկ, ես չեմ հասկանում.  
 «Արդեօք դու զիտէս, ինչ ես ցանկանում.  
 «Մէկ նայիք վրադ, շէնք ու շնորհքիդ,  
 «Լըբլըբան լեզուիդ, ծուռումուռ բայլըիդ,  
 «Ախըը ինչ ունիս թագուհու վայել,  
 «Որ խելքիդ այդպէս քամի է փշել:  
 «Արի, լսիք ինձ, մի անիք այդպէս,  
 «Ամբողջ աշխարհին կըծիծաղեցնես»:

Ել չհամբերեց մեր պառաւ տատը,  
Որ վերջացնէր մարդն իւր խրատը.  
Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,  
Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց:  
— Ի՞նչպէս թէ այդպէս, յանդուզն ըստահակ,—  
Գոշեց ու զարկեց մի ուժգին ապտակ.  
«Համարձակում ես, գոհհիկ անգիտ,  
«Վիճել ինձ նման ազնիւ տիկնոջ հետ.  
«Քեզ հրամայում եմ պատուաւոր խօսրով,  
«Որ խսկոյն գնաս ըո յօժար կամքով.  
«Եթէ ոչ՝ ահա ժողովուած կշտիդ,  
«Մրանք կըտանեն, խփելով վզիդ»:

Երբունին դարձեալ ծովի ափ դնաց.  
(Ես անգամ տեսաւ ծովը սեացած).  
Բոկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին:  
— Ի՞նչ ես կամենում, ծերուկ, — հարցրեց.  
Երբ գլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
«Ելի է կուռում իմ պառաւ կնիկ.  
«Ներիք ինձ, խնդրեմ, ես ամաշում եմ,  
«Որ շար պառաւիս նոր ուզածն ասեմ.  
«Բայց ո՞ր ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողնում,  
«Կրակն է ձգել, այլրում, խորովում.  
«Գնա, ասում է, — ախ, նզովեալ կին, —  
«Ծուտ գնա, ասա ոսկի ձկնիկին,  
«Ար էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
«Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
— Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, — ասաց.  
«Թող ըո պառաւի ուզածը լինի,  
«Թող գնայ, դառնայ ազատ թագուհի»:

Զ.

Ով կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,  
Երբ ձկան մօտից տուն վերադարձաւ.  
Ել ինչ տուն, ինչ բան... դու արքայական  
Ապարանք ասա կամ հսկայական  
Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած,  
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.  
Ջրեղ զանլիմներ, անթիւ սենեակներ,  
Մարդ կըշըշկուէր, եթէ մէջն ընկնէր:  
Ծերը բարձրացաւ մարմար սանդուխրով,  
Մի դահլիճ մտաւ խիստ պատկառանքով.  
Առջեր բացուեց մի նոր տեսարան,  
Երբ այնտեղ գտաւ իւր պառաւ կնկան.  
Նա հիմա պատ թագուհի դառած՝  
Առօր ու փառօր ճաշի է նստած.  
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,  
Ռտի են կանգնած՝ որպէս ծառաներ,  
Թագուհու համար զինի են ածում  
Եւ ահուզողով աշը-ունիքին նայում.  
Ջէմքում կանգնել են ահեղ զինուորներ,  
Ռւսերին բռնած կացնաձև սրեր.  
Մենակ պառաւն էր սեզանին բազմել.  
Ով կըյանդզնէր նրա հետ նստել.  
Բայց կերակուրներն այնքան շատ էին,  
Որ հարիւր հոգի կըկշտացնէին.  
Եւ քանի տեսակ անծանօթ բաներ,  
Ի՞նչ անուշեղին, ինչ տապականներ...  
Պառաւն ուտում էր մեծ ախորժակով  
Ու զինին դարտկում լիքը բաժակով.  
Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,  
Որ բաղցըցնէ շրթունք ու բերան:  
Երբն այս տեսնելով՝ մնաց շփոթուած,  
Ընկաւ պառաւի ոտներն ու ասաց.

— Բարով քեզ, բարով, ահեղ թագուհի,  
«Քո մեծութիւնը յաւիտեան լինի»:  
Այս խօսրից յետոյ կամաց շնչեց  
Ու փսփսալով պառաւին հարցրեց.  
— Հիմա որ բաղդի վերին ծայրումն ես,  
«Խօմ բաւական ես, ա կնիկ, ինչ կասես»:  
Թագուհի դառած պառաւն այս անգամ  
Մարդի երեսին չնայեց անգամ.  
Հրաման մումուց նա ըթի տակին,  
Որ գուրս վոնդեն մեր անկոչ հիւրին:  
Հէնց որ լսուեցաւ թագուհու հրաման,  
Հնագանդ երևալ ամենըն ուզեցան.  
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէզեր,  
Ինչպէս որսորդի արնախում շներ,  
Խփելով ծերի քակոթին,  
Ճքեղ դահլիճից գուրս վոնդեցին.  
Ճէմքումը կանգնած պահապաններն էլ  
Իրանց կացիններն էին պատրաստել.  
Վրայ վազեցին ամենըը մէկէն  
Ու բիշ մնաց, որ խեղճին խողխողեն:  
Ինչպէս որ եղաւ՝ մի կերպ գուրս պըծաւ,  
Դուրսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,  
Որ կարծես նրան լինէր սպասում  
Անձրեի տակին, ցեխոտ փողոցում:  
— «Եյ թէ լաւ արին, ծերուկ գու անգէտ,  
«Ում հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.  
«Թող այս քեզ համար լինի լաւ խրատ,  
«Որ էլ շցանես մանր կտաւատ»:

։

Այս դէպքից յետոյ շատ օրեր չանցան,  
Պառաւի այծերն էլի մօտ եկան.  
Ուղարկում նա է իւր իշխաններին,  
Որ գտնեն, բերեն արտաքսուած ծերին.

Եկաւ ծերունին, Պառաւն սկսեց.  
— Գու պէտք է գնաս ձկան մօտ, — ասեց.  
«Կերթաս, խոր զլուխ կըտաս զու նրան  
«Ու իմ փափազը կըյայտնես իրան.  
«Կասես՝ շեմ ուզում մնալ թագուհի,  
«Ուզում եմ լինել ծովի տիրուհի.  
«Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,  
«Ուկի ձկնիկին ծառայ ունենալ,  
«Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի  
«Եւ ինչ ուզենամ, իսկոյն կատարի»:  
Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,  
Առանց յայտնելու որ և է տրտունջ:  
Ծերունին զարձեալ ծովի տփ գնաց.  
Այս անգամ ծովը խիստ էր ժոթորկուած.  
Փրփրած ալիքներ սարեր դառնալով,  
Իրար են զարկուում անեղ զոռալով):  
Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին:  
— Ի՞նչ ես կամենում, ծերուկ, — հարցրեց.  
Ծերը զլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
«Խսպառ գժուել է իմ պառաւ կնիկ.  
«Ի՞նչ անեմ արդեօր այդ նզովեալին,  
«Մինչև երբ տանջուեմ քաւթառի ձեռին.  
«Էլ չի կամենում թագուհի լինել,  
«Այլ, տես, անիծածն ինչ է միտք արել.  
«Իշխել է ուզում բոլոր ջրերին  
«Եւ իշխանուհի դառնալ ծովային.  
«Ուզում է Ովկեան ծովումը կենալ,  
«Ուկի ձկանդ ծառայ ունենալ,  
«Որ իւր հրամանին միշտ պատրաստ կենաս,  
«Եւ ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,  
Բայց էլ ծերունուն չպատասխանեց.

Ճըի երեսին շրմփաց պոշով  
Ու անցաւ, գնաց դէպի խորին ծով...

Ըստ մնաց ծերը և շատ նայեցաւ,  
Բայց ոսկի ձկնիկն էլ չերեցաւ.

Դարձաւ զլխակոր, որ յայտնէ կնկան,  
Թէ ինչ փորձանքի մէջ ձդեց իրան:

Եւ գնաց-տեսաւ... (բայց ինչ տեսնի լաւ,  
Որ արգար լինի և ոչ անիրաւ),

Հին խուզի շէմքում պառաւը նստած,  
Կոտրած տաշտակը առաջնի ընկած...

Վ Ե Ռ Զ

3332

2013



